


Նոյի Աղավնին Վերադառնում է
Հայաստանը, Թուրքիան և քննարկումները Ցեղասպանության
շուրջ



Բեռլին-Ստամբուլ-Երևան

21 Ապրիլ 2009

www.esiweb.org

Ամփոփում

Ոչ մի այլ թեմա չի թունավորում թուրքերի և հայերի միջև հարաբերություններն այնքան, որքան որ 1915 թ. Հայկական համայնքների ոչնչացումն Անատոլիայում և այն հարցը, թե արդյոք այն հանդիսանում է ցեղասպանություն: Միջազգային թատերաբեմում ցեղասպանության ճանաչման դեմ պայքարը Թուրքիայի համար հանդիսացել է արտաքին քաղաքականության գլխավոր նպատակ: Հայերի համար ցեղասպանությունը և դրա հետևանով տեղի ունցեց պատմական հայրենիքի կորուստը հանդիսանում են ազգային ինքնության որոշիչ տարրեր: Ներկայումս երկու երկրների միջև չկան դիվանագիտական հարաբերություններ: Սահմանը նրանց միջև շարունակում է փակ մնալ: Վերջին ժամանակներում մերձեցման առաջին նախանշաններ են ի հայտ եկել, երբ երկու երկրների քաղաքական առաջնորդները հաշտեցման ժեստեր են կատարում: Բայց նայնպես որպեսզի հարաբերությունների կարգավորումը տեղի ունենա երկու կողմերն էլ պետք է հաղթահարեն որոշ խորը արմատավորված նախապաշարմունքներ:

Վերջին տարիներին Թուրքիան ԵՄ անդամակցության գործընթացի ազդեցության տակ խորը փոփոխությունների միջով է անցել՝ բարեփոխելով իր սահմանադրությունը և նվազեցնելով ազգային անվտանգության համակարգի դերակատարությունը քաղաքացիական հարաբերություններում: Ժաղովրդավարացման գործընթացը առաջին անգամ հնարավորություն է ընձեռել, որ Թուրքիայում տեղի ունենան բաց քննարկումներ Հայկական հարցի վերաբերյալ: Տարիներ շարունակ պաշտոնական թուրքական պատմագրությունը պնդել է, որ ապստամբ հայ բնակչությունը Առաջին աշխարհամարտում հարելով ռուսների կողմը, հանդիսանում էր հիմնական ագրեսոր կողմը և իր իսկ կործանման հեղինակը: Նրանք, ովքեր կասկածի տակ էին դնում պաշտոնական տեսակետը, պտակավորվում էին որպես դավաճաններ և վտանգվում էին քրեական պատասխանատվությամբ: 2000 թ. ից սկսած թեև թուրքական քաղաքացիական հասարակությունը սկսել է դիտարկել Օսմանյան ժամանակաշրջանի հայերի պատմությանը նոր լույսի ներքո՝ հրնթանս կոտրելով բազմաթիվ տարուներ:

Նույն ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը դրամատիկ զարգացում է գրանցել: «Զերոյական խնդիրներ հարևանների հետ» կարգախոսի ներքո ներկայիս թուրքական կառավարությունը ջանում է լուծել տարատեսակ երկարատև հակամարտություններ՝ ամրապնդելով Թուրքիայի որպես ռազմավարական դերակատարի դիրքերը միջազգային և տարածաշրջանային

պլատֆորմներում: Սակայն մինչ այժմ այս տեսլականում Հայաստանը շարունակել է մնալ մթազնած կետ: Թուրքիան նաև շարունակում է ներդնել հսակայական քաղաքական կապիտալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը խոչընդոտելու համար:

Սակայն սա ճակատամարտ է, որում Թուրքիան չի կարող հաղթանակել: 1915 թ. ցեղասպանությունը հիշատակող օրինագծեր անց են կացվել 20 ից ավելի երկրներում, ներառյալ Թուրքիայի մերձավոր դաշնակիցներից շատերը: Հաշվի առնելով այն, որ ԱՄՆ նախագահը և նրա վարչակազմի ավագ ներկայացուցիչներից շատերը նախկինում հրապարակավ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, այժմ միայն ժամանակի խնդիր է մինչև որ ԱՄՆ-ը ևս կհետրի այդ օրինակին: Սակայն հակառակ շատ թուրքերի մտավախությունների սա ամենևին հակաթուրքական զգացմունքների աճի կամ հայկական սփյուռքի լոբբիզմի հզորության նշան չէ: Ավելին, ճանաչման այլքի աճը արտացոլում է գիտնականների և իրավաբան մասնագետների շրջանակներում ցեղասպանության զարգացող ընկալողունակությունը: Այժմ կոնսենսուս կա, որ ցեղասպանություն (ամբողջովին կամ մասնակիորեն որևէ ազգային կամ էթնիկ խմբի ոչնչացման փորձեր) 20-րդ դարի ընթացքում տեղի է ունեցել բազմաթիվ անգամ, աշխարհի գրեթե յուրաքանչյուր անկյունում: Ցեղասպանագիտության ոլորտում հազիվ թե որևէ համբավվող գիտնականներ կան, ովքեր կասկածի տակ են դնում, որ այն ինչ տեղի ունեցավ հայերի հետ 1915 թվականին հանդիսանում է ցեղասպանություն: Սակայն նաև պարզ է, որ մերօրյա Թուրքիան իրականորեն պատասխանատու չէ ցեղասպանության գործողությունների համար, որոնք տեղի են ունեցել ավելի քան մեկ դար առաջ, և ցեղասպանությանը նդունումը կասկածի տակ չի դնի գործող հայ-թուրքական սահմանը:

Մա նաև ժամանակահատված է, երբ հայերի մեջ ևս բուռն քննարկումներ են տեղի ունենում: Տասնամյակներ շարունակ հակաթուրքական զգացմունքները և Մեծ Հայքի մասին երազները սփյուռքի և նաև Հայաստանի հանրապետության շատ հայերի համար միավորող թեմաներ են եղել: Բայց սկսած վաղ 90-ական թթ-երից պատմական տարածքների վերադարձման մաքսիմալիստական պահանջները հարկադրված էին մրցակցել առավել պրագմատիկ պաշտոնական տեսակետի հետ, որը դիտարկում է Թուրքիայի հետ բարելավված հարաբերությունները որպես ռազմավարական հրամայական մեկուսացված և ցամաքով շրջապատված Հայաստանի հանրապետության համար: Հայաստանյան հաջորդող կառավարությունները Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորման կոչ են արել: Հայերն այժմ ընտրության առջև են կանգնած. կամ վերաբերվել Թուրքիային որպես հավերժական թշնամի, կամ էլ նրա

հետ հարաբերությունների մեջ ներգրավվել հույսով, որ մի օր ԵՄ-ի հետ ընդհանուր սահման կունենան:

Երկու երկրների համար էլ այժմ վճռական ժամանակահատված է: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և սահմանների բացումը թեև հաշտեցմանն ուղղված առաջին քայլեր կլինեն, բայց կմեկուսացնեն երկու կողմերից հնչող ծայրահեղական մոտեցումները՝ հնարավորություն տալով, որ առավել տրամաբանական և չափավոր քննարկումները զարգանան: Թուրքիան պետք է դադարեցնի իր երկրում և արտասահմանում Հայոց ցեղասպանության քննարկումները խեղդելու փորձերը և խուսափի գերարձագանքելուց եթե իր դաշնակիցներից մյուսները ճանաչեն 1915 թ. դեպքերը որպես ցեղասպանություն, որը շատ հնարավոր է թվում: Իրենց մասով, հայերը պետք է ընդունեն, որ ցեղասպանության ճանաչումը երբեք ճանապարհ չի հարթի վերանայելու այն տերիտորիալ կարգավորվածությունը, որը գործում է արդեն գրեթե մեկ դար շարունակ:

«Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա: Ջուրը մինչև տասներորդ ամիսը քաշվում էր, նվազում: Տասնմեկերորդ ամսի առաջին օրը երևացին լեռների գագաթները: Քառասուն օր հետո Նոյը բացեց իր կառուցած տապանի պատուհանը: Նա արձակեց մի ագռավ, որը գնաց, բայց չվերադարձավ, մինչև որ ջուրը ցամաքեր երկրի վրայից: Հետո նա արձակեց մի աղավնի՝ տեսնելու, թե ջրերը քաշվել են երկրի երեսից: Աղավնին իր ոտքը դնելու տեղ չգտնելով՝ վերադարձավ նրա մոտ՝ տապան, որովհետև ջուրը դեռ ծածկել էր ողջ երկիրը... Նա սպասեց ևս յոթ օր և տապանից դարձյալ արձակեց աղավնուն: Աղավնին նրա մոտ վերադարձավ երեկոյան: Նրա կտուցին ձիթենու մի ճյուղ կար: Նոյը դրանից հասկացավ, որ ջրերը քաշվել են երկրի վրայից»:

Բովանդակություն

1. Ֆուտբոլային դիվանագիտություն.....	5
II Դավաճանություն և ներողամտություն	8
Ա. Պատի վրայի առաջին ճաքերը.....	9
Բ. Տաբուներ և ազգային անվտանգություն	13
Գ. Դեպի զգոն քննարկում	19
III. Թուրքական դիվանագիտության հաջողությունը և ձախողումը	22
Ա. «Ոչ մի խնդիր հարևանների հետ»	22
Բ. Ցեղասպանության դիվանագիտությունը.....	26
Գ. Ցեղասպանության դարաշրջան.....	29
Դ. Լքված դաշնակիցների կողմից	35
Ե. Ճանաչման հետևանքները.....	39
IV. Մեծ Հայաստանի խամրող երազը.....	42
V. Թևավոր թռչուններ.....	48
VI. Եզրակացության փոխարեն. Արարատի լույսը	53

1. Ֆուտբոլային դիվանագիտություն

2008թ. Սեպտեմբերի 6-ի՝ Շաբաթ օրը, ժամը 16:45-ին Airbus 319 ինքնաթիռը վայրէջք կատարեց Երևանի Զվարթնոց օդանավակայանում:¹ Ինքնաթիռից դուրս եկավ Թուրքիայի նախագահ Աբդուլլա Գյուլը նրան դիմավորեց ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանը: Հայկական կարմիր-կապույտ-նարնջագույն դրոշմ ծածանվում էր թուրքական կիսալուսնի և աստղի կողքին: Երկու ուղղաթիռներ պտտվում էին օդում: Թուրքիայից Վրաստանի տարածքով բերված զրահապատ մեքենան սպասում էր Գյուլին: Նա Երևանում էր Թուրքիայի և Հայաստանի ֆուտբոլային հավաքականների միջև աշխարհի գավաթի ընտրական հանդիպումը դիտելու համար: Սա Թուրքիայի նախագահի առաջին այցն էր Հայաստան:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի 2008 թ. հուլիսի հրավերն ընդունելու որոշումը Անկարայում ոչ բոլորին գոհացրել: Դենիզ Բայկալը՝ ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության առաջնորդի քննադատությունը հեզմանք էր պարունակում «Հայաստանը ճանաչել է Թուրքիայի սահմանները, հրաժարվել է ցեղասպանության պնդումներից գորքերը դուրս բերում է Ղարաբաղի օկուպացված, հողերից: Եթե այս քայլերը տեղի չեն ունեցել, ապա ինչու՞ է նա գնում»:² Դեվլեթ Բահչելին՝ մեծությամբ երկրորդ ընդդիմադիր կուսակցության, ազգայնական MHP-ի առաջնորդը, մեղադրեց Գյուլին արտաքին ճնշումներին տեղի տալու մեջ՝ այցն անվանելով «պատմական սխալ», որը «վնաս կհասցնի Թուրքիայի պատվին»:³

Երբ Գյուլի շարասյունը մտավ Երևանի կենտրոն բողոքի գործողության մասնակիցները բռնել էին անզլերեն, հայերեն և թուրքերեն լեզուներով ցուցանակներ՝ «Ես Վանից եմ», «Ընդունեք ճշմարտությունը», «Պահանջում ենք արդարություն» և «Թուրքիա, ընդունի՛ր քո մեղքը»: 1915թ Անատոլիայում հայերի կոտորածները ցեղասպանություն ճանաչած երկրների դրոշները, (այդ թվում

¹ The Armenian Reporter, “[Armenia receives Turkey’s president for six-hour visit](#)” 12 September 2008

² *Sabah*, “[Baykal Bari soykırım anıtını da ziyaret et](#)” [Բայկալ. Դուք կարող եք նաև այցելել Ցեղասպանության Հուշահամալիր], 5 Սեպտեմբեր 2008.

³ Akif Arslan, “[Abdullah Gul, Erivan’a gitmeli mi?](#)” [Պե՞տք է Աբդուլլա Գյուլը գնա Հայաստան], *kanal46*, 4 Սեպտեմբեր 2008.

Ֆրանսիան, Կանադան և Արգենտինան) ակներև ծածանվում էին ճանապարհի երկայնքով: Բողոքները կազմակերպվել էին Հայ Հեղափոխական Դաշնակցության կամ դաշնակցական կուսակցության կողմից:⁴ 1890 թ. ցարական Ռուսաստանում հիմնադրված դաշնակցականների առաջին հայտարարությունը զգուշացնում էր, որ «դարեր շարունակ ստրկացված Թուրքահայաստանը, այժմ պահանջում է իր ազատությունը...Հայն այլևս չի պաղատում, նա հիմա զենքը ձեռքին պահանջում է»:⁵ 1918 թ. ՀՅԴ-ն ձևավորեց Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը: 1920թ. Երբ անկախ Հայաստանը նվաճվեց խորհրդային զորքերի կողմից, դաշնակցական առաջնորդները հեռացան՝ հայկական սփյուռքի մեջ՝ Բեյրութից Լոս Անջելես, հզոր ցանց ստեղծելով: ՀՅԴ-ն այժմ Հայաստանի կոալիցիոն կառավարության կրտսեր գործընկեր է:

Թուրքիայի նախագահի մեքենան մոտեցավ քաղաքի կենտրոնին Մարշալ Բադրամյան պողոտայով, որն կոչվել է Երկրորդ համաձխարհային պատերազմում խորհրդային բանակի նշանավոր հայազգի զեներալի անվամբ: Այն անցավ Հադրանակի կամրջով, որը 1945թ. ին կառուցվել է ի հիշատակ այն 450.000 հայորդիների, որոնք Կարմիր բանակի շարքերում պայքարել են ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի:⁶ Թեև վերջերս Երևանը նշեց իր ծննդյան 2750 ամյակը, շատ քիչ շինություններ կան, որ կառուցվել են կոմունիստական ժամանակաշրջանից առաջ: Նախքան նորակառույց Գոլդըն Փելլուս հյուրանոց ժամանելը, որտեղ տեղավորվել էր Թուրքիայի ֆուտբոլի հավաքականը՝ շարասյունն անցավ Մեսրոպ Մաշտոց պողոտայով, որը կրում է 5-րդ դարում հայկական այբուբենն ստեղծած հայ հոգևորականի անունը՝ :

Հյուրանոցի վերջին հարկից դեպի արևմուտք՝ Արարատյան դաշտավայրից վեր, թուրք-հայկական սահմանի մյուս կողմում տեսանելի են Արարատ լեռան ուրվագծերը: Նոյան տապանի աստվածաշնչյան վայրը հայերի համար սրբատեղի է: Երևանում Արարատը տեսանելի է ամենուր՝ Հայաստանի զինանշանի, հանքային ջրերի շշերի ընկերությունների լոգոների վրա, հյուրանոցներում, խանութներում: Թուրքիայի հավաքականի ժամանումից մի քանի օր առաջ Արարատի պատկերն առկա էր նաև Հայաստանի ֆուտբոլի հավաքականի համազգեստի վրա, մինչև որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան որոշեց փոխել լոգոն՝ Արարատ սարը փոխարինելով ֆուտբոլի գնդակով: Քննադատության հուժկու ալիքի հանդիպելով՝ Ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարը պաշտպանվելով արձագանքեց. «Ես ընդունում եմ, որ իրոք սխալ ենք թույլ տվել : Բայց դա չի նշանակում, որ ինձ պետք է մեղադրել

⁴ ՀՅԴ- Հայ Յեղափոխական Դաշնակցություն

⁵ Razmik Panossian, *The Armenians – From Kings and Priests to Merchants and Commissars*, 2006, էջ. 156.

⁶ Gerard Libaridian, *Modern Armenia – People, Nation, State*, 2004, էջ 24

յուրաքանչյուր մեղքի համար: Ես չեմ ստորագրել Կարսի կամ Ալեքսանդրապոլի պայմանագրերը»:⁷

Թուրքական թիմին հասցեագրված քաջալերանքներից հետո Աբդուլա Գյուլը հեռացավ հյուրանոցից և մեկնեց նահագահական նստավայր՝ խորհրդային ժամանակաշրջանի կառույց, որի առջև գտնվում են երկու մարմարյա արձաններ: Մեկը Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55) արձանն է՝ հայոց առաջնորդ, ում թագավորության սահմանները ձգվում էին Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով (և որի մայրաքաղաք Տիգրանակերտը գտնվում էր այժմեան Թուրքիայում): Մյուսը Նոյ Նահապետի արձանն է, որի ժառանգներից Հայկը, համաձայն առասպելի, հանդիսանում է հայոց նախահայրը: Ապստամբելով Բաբելոնի չար առաջնորդի դեմ՝ Հայկը առաջնորդեց իր ժողովրդին դեպի Տապանի տարածք Արարատ լեռան մոտ, և պաշտպանեց հայոց հայրենիքը չարի և բարու միջև ծավալված վերջին ճակատամարտում: Հայերը դրանից հետո նրա հիշատակին իրենց անվանում են *Հայկ*:⁸

Պալատում երկու նախագահներն առանձնազրույց ունեցան, որին հաջորդեց ընթրիքը: Այնուհետև նախագահները համատեղ մամլո ասուլիս տվեցին: «Այս այցը լավ հնարավորություն կատեղծի երկկողմ հարաբերությունների նորմալացման համար», ասաց Գյուլը:⁹ «Ես տեսա պատրաստակամություն, ես տեսա ցանկություն՝ տարածաշրջանում կայունություն և խաղաղություն հաստատելու, ինչի համար շատ ուրախ եմ», լրագրողներին ասաց Սարգսյանը:¹⁰

Մարգարաշտում քամին ծածանում էր Հայաստան-Թուրքիա բառերով բարեկամության դրոշները: Հնչեցին երկու ազգային օրհներգերը. թուրքականը՝ խնդրելով կարմիր դրոշի կիսալուսնին, «Ժպտալ իր հերոսական ցեղին/հակառակ պարագայում մեր այս արյունը, որ թափեցինք քեզ համար, չի լինի օրհնյալ», և հայկականը՝ հաստատելով, որ «երանի այն մարդուն, որ յուր ազգի ազատության համար կգոհվի»: Մարգարաշտից ոչ հեռու գտնվող բարձունքում Հայոց ցեղասպանության հուշակոթողի առջև բողոքի գործողության մասնակիցները մոմեր և ճրագներ էին վառել: Խաղը սկսվեց ժամը 21:00 ին: Այն արդար էր, բայց ոչ դիտարժան, և թուրք հյուրերը երկրորդ խաղակեսում երկու անպատասխան գոլ

⁷ Ալեքսանդրապոլի (1920) և Կարսի (1921) պայմանագրերը սահմանել են թուրք-հայկական սահմանը՝ թողնելով Արարատ լեռը Թուրքիայի կազմում: Ընտրական հանդիպումից մեկ ամիս անց Արարատ լեռը նորից դրվեց ՀՖՖ-ի լոգոյում նոր ձևավորմանը:

⁸ Razmik Panossian, *The Armenians*, p. 51.

⁹ Hasan Cemal, “Gül ve Sarkisyan İyî bir başlangıç yaptık” [Գյուլ և Սարգսյան. Մենք լավ սկիզբ դրեցինք], *Milliyet*, 7 Մեպտեմբեր 2008.

¹⁰ Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն, «Հայլուր», Մեպտեմբեր 6, 2008

խփելով՝ ապահովեցին 0:2 հաշվով հաղթանակ:¹¹ Մինչև կեսգիշեր, Աբդուլա Գյուլը վերադարձավ տուն՝ հայկական հողի վրա լինելով ութ ժամից էլ պակաս: Այցն անցավ առանց միջադեպերի:

Երևանում ոմանք մեծ սպասելիքներ ունեին. Յեղասպանության Թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը գրում է. «Վերլուծաբանների մեծ մասը և մամուլը երկար ժամանակ լարված բնույթ կրող հայ-թուրքական հարաբերություններում «ակնթարթային» լուծումներ էին կանխատեսում»: ¹² Բայց որևէ լուծում ի հայտ չեկավ, որևէ բեկումնային հայտարարություններ չարվեցին: Մահամները շարունակվեցին փակ մնալ, իսկ դիվանագիտական հարաբերությունները՝ չհաստատված: Հանդիպումից երեք օր անց դաշնակցականները հանդիպումը որակում էին որպես «Թուրքիայի համար քարոզչական հնարավորություն»:¹³

Բայց տեղաշարժ տեղի էր ունեցել: Անկարա վերադառնալիս օդանավում Գյուլը լրագրողներին ասաց, որ Թուրքիան և Հայաստանը կարիք ունեն «օգտվել այն տեղաշարժերից, որոնք խթանվել են Երևան այցի շնորհիվ» այլապես «հարկ կլինի սպասել ևս 15-20 տարի հաջորդ հնարավորության համար»:¹⁴ Արտգործնախարար Ալի Բաբաջանը Գյուլի հետ միասին Երևանից չհեռացավ: Նա վերադարձավ Հանրապետության հրապարակում տեղակայված ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, որտեղ մինչև վաղ առավոտ նա բանակցում էր Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանի հետ: Երկու նախարարները ևս յոթ անգամ պետք է հանդիպեին 2008թ. սեպտեմբերից մինչ 2009թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում:

Այն ժամանակ ոչ ոք չէր կարող ասել, թե արդյոք այդ ֆուտբոլային ընտրական հանդիպումը կլիներ մեծ քայլ իսկապես պատմական հաշտեցման հասնելու ճանապարհին:

II Դավաճանություն և ներողամտություն

¹¹ *TribunTV*, “[Ermenistan-Turkiye Maci](#)” [Հայաստան-Թուրքիա խաղ], 6 սեպտեմբեր 2008.

¹² Hayk Demoyan, Museum G-Brief Vol 3, No.1.

¹³ Երկիր, լուրեր, Սեպտեմբեր 10, 2008, www.yerkir.am, ՀՅԴ Մամուլ Դիվան

¹⁴ Մեջբերված է Cengiz Candar, “Gül'un umudu bayramda yumuşama ve barışma”, [Գյուլի հույսը փափկում է], *Referans*, 22 September 2008.

Ա. Պատի վրայի առաջին ճաքերը

2000թ. հոկտեմբերի 9-ին թուրք պատմաբան Հալիլ Բերկթայը՝ Ստամբուլի հեղինակավոր Մաբանջի համալսարանի պրոֆեսորը, *Ռադիկալ* օրաթերթին մի ամբողջ էջ հարցազրույց տվեց: Այն կրում էր «Հատուկ կազմակերպությունն է սպանել հայերին» վերնագիրը: ¹⁵ 1915թ.՝ Օսմանյան կայսրության գոյության վերջին տասնամյակում, առնվազն 600.000 հայերի մահվան պատասխանատվությունը Բերկթայը դնում է Օսմանյան վերջին կառավարության ուսերին: Ըստ նրա, հայկական խռովության հետևանքով սպանվել են հազարավոր թուրք և քուրդ մահմեդականներ, բայց «հայ խռովարարների գործունեությունը առավելապես կրում էին տեղայնացված բռնությունների բնույթ»: Մինչդեռ օսմանյան պատասխանը այլ բնույթի էր. Բերկթայը նշում է, որ կառավարությունը ստեղծեց «հատուկ մահվան ջոկատներ» և հանցագործներից բաղկացած կամավորական խմբեր՝ ջարդերն իրականացնելու համար:¹⁶

Դրանից առաջ երբեք որևէ հեղինակավոր թուրք գիտնական մամուլում այդքան բաց չէր խոսել հայկական ջարդերի մասին: ¹⁷ Բերկթայը նշում է, որ արձագանքն անմիջապես հետևեց.

«Իմ հարցազրույցից հետո ես շատ դրական պատասխաններ ստացա: Հեռախոսով, նամակներով, մարդիկ կանգնեցնում էին ինձ փողոցներում: Դրական արձագանքերը շատ ավելին էին քան բասացականները: Միաժամանակ, ես հայտնվեցի դժոխային իրավիճակում: Հարցազրույցից մեկ օր անց շատ համացանցային կայքեր իմ մասին տեղեկություններ էին տեղադրել, ներառյալ մանրամասներ, որոնք սովորական լրագրողական մեթոդներով հնարավորն չէր պարզել: Դա կազմակերպված հարձակում էր: Ես ստանում էի ատելությամբ լի նամակներ: Դա բեմադրված ահաբեկում էր՝ կեղծ պատվախնդրություն»:¹⁸

Էմին Չոլասանը՝ Թուրքիայի ամենաազդեցիկ թղթակիցներից մեկը, հարձակվեց Բերկթայի վրա այն ժամանակ ամենաշատ վաճառվող օրաթերթի՝ *Հյուրիեթի*

¹⁵ Nese Duzel, “[Ermenileri özel örgüt öldürdü](#)”, [Հատուկ կազմակերպությունն է սպանել հայերին], *Radikal*, 9 Հոկտեմբեր, 2000.

¹⁶ Նույն տեղում

¹⁷ Առաջին թուրքերեն գիրքը, որ պնդում է, որ Օսմանյան առաջնորդները ցեղասպանություն են գործել հայերի դեմ, գրվել է Թաներ Աքչամի կողմից 1992թ: Այդ ժամանակ նա բնակվում էր Գերմանիայում:

¹⁸ ESI-ի հարցազրույց մարտ 2009

էջերում՝ «Նրանք, ովքեր մեզ մեջքից են հարվածում» հոդվածով:¹⁹ Չոլասանը մեղադրում էր Բերկթային դավաճանության մեջ և պահանջում էր նրան հեռացնել Սաբանջիի Համալսարանից «հայրենիքի դեմ ուսանողներին հրահրելու և նրանց երիտասարդ գլուխները ստերով լցնելու» համար:²⁰ Երբ Բերկթայը և այլ թուրք գիտնականներ 2001 թ.մարտին գերմանական Մյուլհայմ քաղաքում տեղի ունեցած գիտաժողովի շրջանակներում հանդիպում ունեցան հայ պատմաբանների հետ, *Հյուրիէթը* այն անվանեց «չարի հանդիպում», որտեղ «այսպես կոչված թուրքերը հարձակվում են Թուրքիայի վրա»:²¹

Թուրքական պատմագրությունը այն տեսակետին է, որ 1915թ. Անատոլիայում տեղի ունեցած արյունահեղության պատճառը հայկական ապստամբությունն էր, որը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ աջակցել է Ռուսաստանին ընդդեմ Օսմանյան կայսրության: Օսմանյան իշխանությունները ապաստամբությանը պատասխանել են հայ բնակչության զանգվածային տեղահանությամբ: Ըստ այս տեսակետի, հայկական զոհերը հիմնականում տեղահանումների ընթացքում ի հայտ եկած հիվանդությունների և սովի հետևանք էին: Ինչպես Թուրքիայի նախկին դեսպան Գյունդուզ Աքթանն է նշում. «հայերը պարտվեցին քաղաքացիական պատերազմում, որն իրենք էին սկսել»:²²

Արդեն 1985թ. Քամուրան Գյուրունը՝ 1980թ. հեղաշրջումից հետո Արտաքին գործերի նախարարության փոխարտուղարը, իր «Հայկական ինդիքը - անմեղության առասպելը բացահայտված» գրքում պատմում է, որ միլիոնից ավելի հայերի տեղահանությունը քայլ էր, որ ցանկացած այլ պետություն կնախաձեռներ.

«Հայերին ստիպեցին արտագաղթել, որովհետև նրանք միացել էին թշնամուն: Այն փաստը, որ նրանք քաղաքացիական բնակչություն էին ներկայացնում, իրերի վիճակը չի փոխում: Նրանք, ովքեր սպանվեցին Հիրոշիմայում և Նագասակիում երկրորդ Աշխարհամարտի տարիներին ևս քաղաքացիական բնակչություն էին ներկայացնում....Թուրքիան նրանց չսպանեց, այլ տեղափոխեց: Քանի որ ավելի լավ որոշում հնարավոր չէր ընդունել տվյալ իրավիճակում, չի կարող ընդունվել

¹⁹ Emin Colasan, “Bizi icimizden vuranlar”, [Նրանք, ովքեր մեզ մեջքից են հարվածում] *Hurriyet*, 18 հոկտեմբեր, 2000. մեջբերված է Quoted in Guenther Lewy, *The Armenian Massacres in Ottoman Turkey – A Disputed Genocide*, 2005, էջ 271.

²⁰ Emin Colasan, “Bizim enteller uzuldu” [Մեր մտավորականները վրդովված էին], *Hurriyet*, 21 հոկտեմբեր, 2000.

²¹ Mehmet Nefci “The Turkish Media Debate on the Armenian Massacres”, in Steven Jensen (ed.), *Genocide. Cases, Comparisons, and Contemporary Debates*, 2003.

²² Դեսպան Գյունդուզ Աքթանի ելույթը Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում, Սեպտեմբեր 14, 2000

այն տեսակետը, որ ճանապարհի դժվարություններին դիմադրել չկարողանալու հետևանքով մահացածները սպանվել են թուրքերի կողմից»:²³

Թուրքական պատմագիտական ընկերությունը, որը հիմնվել է 1930-ական թթ., սահմանեց 1915 թ. իրադարձությունների «ճշգրիտ» ազգային մոտեցումը: Երկար ժամանակ այդ ընկերության տնօրենի պաշտոնը զբաղեցրած Յուսուֆ Հալաջողլուն ակնարկ արեց «այն 519.000 թուրքերի մասին, ովքեր սպանվել են հայերի կողմից՝ ընդգծելով, որ «հայերից շատերը մահացել են հիվանդություններից... Մեր ձեռք բերած թվերի համաձայն, սպանվածները մոտ 8-10.000 են»:²⁴ 2007թ. նա նաև պնդում էր, որ հայերը մինչև օրս շարունակում են մահացու սպառնալիք հանդիսանալ Թուրքիայի համար, քանի որ «Քրդական բանվորական կուսակցության» (ՔԲԿ) «անդամներից շատերը» իրականում հայկական ծագումով քրդեր են: ²⁵ Սա նույնպես ազգայնամոլական բռնկում էր: 1994թ. մարտին TRT ազգային հեռուստաընկերությունը պնդում էր, որ ՔԲԿ առաջնորդ Աբդուլա Օջալանը (Այօ) Արտին Հակոբյան անունով հայ էր:²⁶

1990 ականների ընթացքում շարունակաբար դատական գործեր էին հարուցվում նրանց դեմ, ովքեր հարցականի տակ էին դնում պաշտոնական տեսակետը՝ կիրառելով հակա-ահաբեկչական օրենքը ինչպես նաև թուրքական քրեական օրենսգիրքը: Երբ Բելջե հրատարակչությունը տպագրեց Իվ Տերնոնի «Հայոց Ցեղասպանության Պատմություն» աշխատությունը, ²⁷ հրատարակիչը դատապարտվեց երկու տարվա բանտարկության (երկու տարին հետագայում փոխարինվեց վեց ամսով):²⁸ 1994թ. երբ նույն հրատարակիչը թարգմանեց Վահագն Դադրյանի «Ցեղասպանությունը ըստ միջազգային և ազգային օրենսդրության. Հայկական օրինակը» գիրքը, այն արգելվեց: ²⁹ 1995թ. հրատարակչությունը ոմբահարվեց անհայտ անձանց կողմից:³⁰

²³ Kamuran Gurun, *The Armenian File – The Myth of Innocence Exposed*, 2007, էջ 276.

²⁴ *True Dergisi*, «Փաստարկված պաշտպանություն ընդդեմ Ցեղասպանության ստի», դեկտեմբերի 10, 2006, հրատարակվել է Թուրքական պատմագիտական ընկերության կողմից (Turk Tarih Kurumu)

²⁵ Gökce Gündüç և Ayşe Sah Bozdoğan, “[Historian Halacoglu's Comments 'Racist'](#)”, (Պատմաբան Հալաջողլուի դիտարկումները «ռասիստական» են) *bianet*, 21 օգոստոս 2007.

²⁶ Tessa Hofmann, [Armenians in Turkey today – A critical assessment of the situation of the Armenian minority in the Turkish Republic](#), հոկտեմբեր 2002

²⁷ Այն տպվեց «Հայկական Տաբուն» վերնագրով 1993 թվականին:

²⁸ Celal Baslangic, “[Tabu'ya ilk yumruk!](#)” [Տաբուին ուղղված առաջին հարվածը], *Radikal*, 3 Հոկտեմբեր 2005

²⁹ Ragıp Zarakolu, “[Ayşe Nur Zarakolu Bir Yayıncının Portresi](#)”, (Այշե Նուր Ջարակոլու, Հրատարակչի կերպարը) *bianet*, 3 դեկտեմբեր 2005

³⁰ 1997 թ. Բելջեն հրատարակեց Ֆրանց Վերֆելի «Մուսա Լեռան Քառասուն օրը»

2001թ. փոխվարչապետ Դեվլեթ Բահչելին՝ Ազգային Շարժում կուսակցության (MHP) առաջնորդը, նախաձեռնեց «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» ստեղծումը: ³¹ Դրա նպատակներից մեկը «ապահովել, որպեսզի երիտասարդները տեղյակ լինեն անցյալում, ներկայում և ապագայում ցեղասպանության մասին անհիմն պնդումների մասին»: ³² Այն հավաքում և ձեռք էր բերում նոր նյութեր թուրքական դպրոցներում պատմության դասավանդման վերաբերյալ, ներառյալ 2002թ. դասագիրքը, որը պնդում էր, որ ցեղասպանության մասին պնդումները Թուրքիան թուլացնելու նպատակով դավադրություն են արևմտյան տերությունների կողմից, որոնք «չեն կարող հանդուրժել հզոր Թուրքիայի գոյությունն ինչպես կարճաժամկետ այնպես էլ երկարաժամկետ առումներով»: ³³

2003թ. թուրքական TRT-ն պետական հեռուստաընկերությունը հեռարձակեց Թուրքիայում երբևէ նկարահանված ամենահավակնոտ փաստագրական ֆիլմերից մեկը: ³⁴ «Սարի Գելին (Դեղին հարսը)-իրական պատմությունը» ֆիլմի քառասուն րոպե տևողությամբ վեց դրվագներում, որոնք երեք տարվա ընթացքում նկարահանվել էին 13 երկրներում, մանրամասն այն թեզն է առաջ քաշում, որ հայերն իրենք են իրենց կործանման պատճառ դարձել դիվերսիոն և ապստամբ գործողությունների հետևանքով և որ հայ ահաբեկիչները պատմության ընթացքում շարունակ կոտորել են թուրքերին: Հայերի կողմից արևելյան Անատոլիայի Բգդիր նահանգում գործած վայրագություններն ահավոր մանրամասնություններով են ներկայացվում: Մի տեսարանում թուրք գյուղացիները վերհիշում են, որ «երեխաները կրակի վրա խորովվում էին...կանանց ստիպում էին ուտել իրենց ամուսիններին»:

2007թ. մարտին «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ համակարգող միջգերատեսչական հանձնաժողովն» այս ֆիլմն ուղարկեց Գլխավոր Շտաբին, Ազգային կրթության նախարարությանը, Արտաքին գործերի նախարարությանը և հետախուզական ծառայություններին «անհրաժեշտ պահին օգտագործման համար»: ³⁵ 2008թ. հուլիսին Ազգային կրթության նախարարությունը այն տարածեց ամբողջ Թուրքիայում, որին 2009թ. փետրվարին հետևեց շրջաբերական, որը հիշեցնում էր

³¹ Mehmet Zarif, “Kompozisyon Genelgesinin Sir Yönetmeligi” [Շրջաբերականի գաղտնի համակարգումը], *bianet*, 10 դեկտեմբեր 2003

³² Sadullah Ozcan, “Ermeni Ust Kurulu oluşturuldu, baskanı Devlet Bahçeli”, [Հայկական բարձրագույն խորհուրդ է ձևավորվել, ղեկավարը Դեվլեթ Բահչելին է], *Zaman*, 18 մայիս 2002

³³ Yavuz Ercan, “Osmanli Imparatorlugunda bazi sorunlar ve gunumuze yansimalari” [Օսմանյան կայսրության որոշ խնդիրների մասին և դրանց արտացոլումը մեր օրերում] MEB Talim ve Terbiye Kurulu Baskanligi, Ankara, 2002, էջ 65

³⁴ Aykut Kansu, “Sarı Gelin belgeseli üzerine”, [«Դեղին հարսը» փաստագրականի վերաբերյալ], *Radikal*, 4 մայիս 2003

³⁵ Ragıp Zarakoglu, “Tezgaah işlemeye devam ediyor” [Դավադրությունը շարունակվում է], *Evrinsel*, 24 փետրվար 2009

դպրոցներին, որ ֆիլմը պետք է ցույց տալ ուսանողներին և այդ մասին զեկուցել նախարարությանը: Մի շարք թուրքերի համար, սակայն, ֆիլմի ռասիստական ոգին անտանելի էր: Թղթակից Ահմեդ Ինշելը գրեց, որ «նայելով այս փաստագրական ֆիլմը զգում ես, որ նայում ես դասական ֆաշիստական քարոզչական ֆիլմ»:³⁶ Թուրքիայի հայերը վարչապետի ուղղված և բաց նամակով արձագանքեցին ֆիլմին.

«Մենք չենք հասկանում, թե Գլխավոր շտաբի կամ Կրթության նախարարության որ խնդիրներին է ծառայում ստեղծության և թշնամության սերմանումը ընդդեմ հայերի և մանուկների ուղեղներում հակահայկական զգացմունքներ սերմանելը»:³⁷

Սերդար Կայան, ով 5-րդ դասարանում սովորող աշակերտի հայր է, բողոքի նամակ ուղղեց Ուսրյուդարի (Ստամբուլի թաղամաս) դատախազություն: Նա ասաց. «Իմ աղջիկը շատ անհանգստացած և վախեցած էր այդ ֆիլմից: Եվ նա ինձ այսպիսի հարցեր էր տալիս, «արդյոք հայերը մեզ կտտորե՞լ են»: Հասարակական բողոքի արդյունքում Ազդգային կրթության նախարարությունը օրակարգից հանեց այդ փաստագրական ֆիլմը, նշելով, որ նա «նաև տեղեկացել է», որ ֆիլմը, «որոշ դեպքերում» օգտագործվել է «նախատեսված նպատակից դուրս»:

Բ. Տարւոներ և ազգային անվտանգություն

1961թ. ստեղծված Ազգային Անվտանգության Խորհուրդը (ԱԱԽ) տասնամյակներ շարունակ եղել է պետության ամենահզոր հաստատություններից մեկը, հատկապես 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո՝ գերիշխելով արտաքին և ներքին քաղաքական ոլորտում հանրապետության նկատմամբ հնարավոր սպառնալիքները կանխելու գործում: Թեև պաշտոնապես այն խորհրդատվական մարմին է, ԱԱԽ-ն ծառայել է որպես միջոց ռազմական վերնախավի համար քաղաքական մի շարք հարցերի շուրջ իր տեսակետներն արտահայտելու համար:³⁸

ԱԱԽ-ն շարունակաբար ներկայացրել է Թուրքիան որպես թշնամի ուժերով շրջապատված երկիր, որոնց նպատակն է նրա կործանումը: 2003թ. ապրիլին

³⁶ Yildirim Türker, “Çoktandır sıra çocuklarda” [Երեխաների համար ժամանակը վաղուց է եկել], *Radikal*, 23 Փետրվար, 2009

³⁷ Hyetert, “Sayın Başbakan’a Açık Mektup” [Բաց նամակ վարչապետին], 11 փետրվար 2009.

³⁸ Philip Robins, *Suits and Uniforms: Turkish Foreign Policy since the Cold War*, 2003, էջ 76

Բրյուսելում այդ ժամանակ ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցնող Թունչեր Կիլինչը նշել է.

«Ստամբուլի գրավումից սկսած Եվրոպացիները մեզ համարում են որպես իրենց թշնամի... Եվրոպան բարձրացրեց Հայկական հարցը 1850-ական թթ.: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նրանք հայերին մեր դեմ տրամադրեցին հետագայում տեղի ունեցած տասնյակ սարսափելի իրադարձությունների հիմքերը դրեցին: ՔԲԿ-ն Եվրամիության կողմից հիմնված կազմակերպություն է: ԵՄ-ն է պատճառը, որ մեր ժողովրդից 33.000 մարդ սպանվել է: ԵՄ-ն գաղտնիաբար և բացեիբաց աջակցել է Թուրքիայում սահաբեկչական կազմակերպություններին»:³⁹

Սակայն վերջին տասնամյակի ընթացքում նոր, առավել ազատական Թուրքիա է երևան եկել: ԵՄ ինտեգրացիոն գործընթացի աղդեցության ներքո Կիլինչի մտածողությամբ մարդկանց համար առավել դժվար է դարձել ազգային քաղաքականության վրա ազդեցություն ունենալը: Սկսած 1999թ. դեկտեմբերին Թուրքիային Եվրամիության անդամակցության թեկնածության կարգավիճակ շնորհող ԵՄ որոշումից, լայնածավալ սահմանադրական և օրենսդրական բարեփոխություններն առավել հաստատուն են դարձրել քաղաքացիական և քաղաքական իրավունքները և ուժեղացրել են ժողովրդավարական գործընթացը:

2003թ. հուլիսի 23-ին Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը ԱԱԽ-ի դերակատարությունը սահմանափակող օրենք ընդունեց: Այն վերածվեց բացառապես խորհրդակցական մարմնի քաղաքացիական մեծամասնությամբ: Այն կորցրեց իր իշխանությունը՝ նախագահին և վարչապետին իր «խորհուրդներին» հետևելու պահանջներ ներկայացնելուց: Կինոյի, տեսա և երաժշտության վերահսկող խորհուրդում, ռադիոյի և հեռուստատեսության բարձրագույն խորհուրդում (RTUK), և բարձրագույն ուսումնական խորհուրդում (YOK) ԱԱԽ-ն այլևս ներկայացուցիչ չէր ունենալու: 2004թ. օգոստոսին նշանակվեց ԱԱԽ-ի առաջին քաղաքացիական գլխավոր քարտուղարը:

Քաղաքական միջավայրի չափավոր դառնալուն զուգընթաց թուրք մտավորականները ավելի ու ավելի էին հակվում պատմական տաբուներին մարտահրավեր նետելուն: Նրանցից շատերի համար 1915 թ. իրադարձությունների քննարկումը ճանապարհ էր թուրքական իրական ժողովրդավարության ճանապարհին առկա խոչընդոտները հաղթահարելու համար, ներառյալ և նախ և առաջ «խորքային պետությունը», որը հասկացվում է որպես թուրքական ռազմական, ազգայնական կազմակերպությունների և քրեական աշխարհի տարրերի բավականին

³⁹ Taner Akcam, *From Empire to Republic – Turkish Nationalism and the Armenian Genocide*, 2004, էջ 7.

ազդեցիկ մի ցանց: Սա նաև Թաներ Ակչամի տեսակետն է, ով առաջին թուրք գիտնականն է, որ կոչ է անում պետությանը ճանաչել 1915թ. իրադարձությունները որպես ցեղասպանություն:⁴⁰ Ակչամը պնդում է, որ թուրքական քաղաքական վերնախավն իր օսմանյան նախահայրերից ժառանգել է անպատժելիության ավանդույթը: Ոստիկանության կողմից կտտանքների կիրառումը և ռազմական ծախսերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բացակայությունը, ըստ նրա, երկար ժամանակ արդարացվել են վերնախավի կողմից այն պնդման հիման վրա, որ Թուրքիան շրջապատված է իր կործանմանը ձգտող թշնամիներով: Ակչամը ուղիղ համեմատական է անցկացնում 1915թ. վերաբերյալ քննարկումների, անվտանգության ոլորտի վերնախավի հակա-արևմտյան դիրքորոշումների և Թուրքիայի ավտորիտար միտումների միջև: «Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական հասարակությունում բաց խոսելը, որը կնշանակի Հայոց ցեղասպանության թեմայի ներգրավում թուրքական պատմագրության մեջ, ուղղակի կապ ունի Թուրքիան իրական ժողովրդավարական երկիր վերածելու գործընթացի հետ»:⁴¹

Երբ 2004թ. Թուրքիայի «Արդարություն և զարգացում» կուսակցության (AKP) կառավարությունը աշխատում էր բավարարել ԵՄ անդամակցության բանակցությունների սկսման համար անհրաժեշտ քաղաքական նախապայմանները, մարդու իրավունքների պաշտպան Ֆեթիյե Չեթինը հրատարակեց *Anneannem* (Մեծ մայրս) գիրքը, որտեղ նա նկարագրում է, թե ինչպես է բացահայտել իր տատիկի հայ լինելու հանգամանքը: Չեթինի տատիկին հեռացրել էին իր ծնողներից 1915թ. տարհանումների ժամանակ՝ որպեսզի նրան որպես մահմեդական աղջիկ մեծացնեն: Այդ գիրքը դարձավ ամենաշատ վաճառվող գրքերից մեկը: Շատ այլ նման դեպքեր ևս քննարկման առարկա դարձան, ինչպես օրինակ թուրք առաջին օդաչու և ազգային հերոսուհի, Աթաթուրքի որդեգրած դուստր Սաբիհա Գյոքչենը: Թուրքահայ շաբաթաթերթ «Ազոսը», որը լույս է տեսնում Ստամբուլում, այն ժամանակ Հրանտ Դինքի խմբագրությամբ, նմանատիպ բացահայտումների համար անհրաժեշտ պլատֆորմ տրամադրեց: Մասնավորապես, Սաբիհա Գյոքչենի դեպքը Ազոսին և Հրանտ Դինքին դարձրեցին կատաղի ազգայնամոլության թիրախ:

2005թ. մի խումբ թուրք մտավորականներ, ներառյալ Հալիլ Բերկթայր, գիտաժողով կազմակերպեցին Օսմանյան հայերի ճակատագիրը քննարկելու համար: Պետական

⁴⁰ Mehmet Nefci, “The Turkish Media Debate on the Armenian Massacres”, (Թուրքական լրատվամիջոցների քննարկումները հայկական ջարդերի շուրջ) Steven Jensen (ed.), *Genocide. Cases, Comparisons, and Contemporary Debates*, 2003, էջ 232.

⁴¹ Taner Akcam, *From Empire to Republic – Turkish Nationalism and the Armenian Genocide*, 2004, էջ. xi.

հաստատության որոշ օղակների համար դա չափազանց սադրիչ իրադարձություն էր: Արդարադատության նախարար Չեմիլ Չիչեկը Թուրքիայի ազգային ժողովում քննադատեց կազմակերպիչներին հանրահայտ մեղադրանքներով, թե նրանք «թուրք ժողովրդին մեջքից հարված են հասցնում»: ⁴² Բոսֆորի համալսարանը որոշեց հետաձգել գիտաժողովը,⁴³ բայց հետո որոշեց այն անցկացնել այլ ժամկետներում այն բանից հետո, երբ 110 գիտնականներ համատեղ հայտարարությամբ կոչ արեցին անցկացնել այն: Ստամբուլի վարչական դատարանի վերջին բողոքին կատարված միջամտությունը արգելք հանդիսացավ, որ համաալարաններից երկուսը (Բոսֆոր և Սաբանջի) հյուրընկալեն այդ գիտաժողովը, բայց այն չկարողացավ խոչընդոտել, որպեսզի գիտաժողովն իրականանա երրորդ համալսարանում՝ Բիլգիում 2005թ. սեպտեմբերին:

270 մասնակիցները շատ լավ գիտակցում էին այդ միջոցառման քաղաքական նշանակությունը: Գրականության պրոֆեսոր Մուրադ Բելջեն, ով 1971թ. ռազմական հեղաշրջումից հետո երկու տարի անց էր կացրել բանտում, բացման ելույթում նշեց. «Մա ուղղակիորեն կապված է այն հարցի հետ, թե ինչ տեսակ երկիր կլինի Թուրքիան»: Հալիլ Բերկթայն ընդգծեց «այն, ինչ տեղի է ունեցել 1915-1916թթ. առեղծված չէ...ինդիրը կայանում է գիտությունը ազգայնական տաբուներից ազատագրելու մեջ»: Մի շարք հարգարժան թուրք գիտնականներ բաց ձևով նշեցին, որ 1915թ. իրադարձությունները պետք է ճանաչվեն որպես ցեղասպանություն: Ագոսի խմբագիր Հրանտ Դինքը պատմեց, թե որքան են հայերը կապված անատոլիական հողին: «Մենք հայերս ցանկանում ենք այս հողը, քանի որ մեր արմատներն են այստեղ: Բայց մի անհանգստացեք: Մենք ցանկանում ենք այն ոչ թե ձեր ձեռքից տանելու, այլ գալու և այնտեղ թաղվելու համար»:⁴⁴

Այս իրադարձությունը թուրքական մամուլը լայնորեն մեկնաբանեց որպես խեղդված քննարկումների դարաշրջանի ավարտ: Milliyet օրաթերթը գրեց, «մեկ այլ տաբու վերացավ»: Radikal-ն իր առաջին էջում հայտարարեց «'Ցեղասպանություն' բառը արտասանվել է գիտաժողովի ընթացքում, մինչդեռ աշխարհը դեռ պտտվում է և Թուրքիան դեռ իր տեղում է»: Հաջորդող ամիսների ընթացքում քննարկումները շարունակվում էին: «Ինչ պատահեց 1915թ» գիրքը, որ տպվեց 2005թ. Hurriyet-ի վերլուծաբան Սեֆա Կապլանի խմբագրությամբ, ներկայացնում է տեսակետների այն ամբողջ շղթան, որ հիմա կարելի է լսել թուրք մտավորականության շրջանակներում՝ սկսած նրանցից, ովքեր հերքում են, որ որևէ ջարդեր են տեղի ունեցել մինչև նրանք, ովքեր բացեիքաց անվանում էին այդ դեպքերը որպես ցեղասպանություն:

⁴² *Hurriyet*, «O konferans Türk halkını hançerlemektir» [Այդ գիտաժողովը հարվածում է թուրք ժողովրդին], 25 մայիս 2005

⁴³ *turk.net haber*, «Ermeni Konferansı ertelendi!» [Հայկական գիտաժողովը հետաձգվեց], 25 մայիս 2005

⁴⁴ Hrant Dink, «When the water finds its crack», Ստամբուլի գիտաժողովի ելույթ, 23-24 Սեպտեմբեր, 2005

Բայց ազգայնամուտական հակահարվածը ուժ էր հավաքում: Ծայրահեղ ազգայնական «Դատավորների մեծ միություն» ընկերությունը առանձնակի ուշադրություն էր գրավում: Նրա առաջնորդ Քեմալ Քերինչիզը կիսում էր Կիլինչի աշխարհայացքը:

«Պատմությունը մեզ սովորեցրել է, որ մենք չենք կարող վստահել այդ եվրոպացիներին: Տեսեք, թե ինչ տեղի ունեցավ 1920թ. ՕՍմանյան կայսրությունում՝ թեև իրենք խոսք էին տվել դա չանել: Մարդիկ մեզ հոգեկան հիվանդ են անվանում, բայց մենք այդպիսին չենք»:⁴⁵

Հայկական գիտաժողովից հետո Քերինչիզը դատական գործ հարուցեց 17 անձանց դեմ, ներառյալ վարչապետ Էրդողանը և արտաքին գործերի նախարար Գյուլը, որոնք վերջում օգնել էին, որ գիտաժողովը տեղի ունենա: ⁴⁶ Թուրքական Քրեական օրենսգրքի համաձայն Քերինչիզը մեղադրանքներ է ներկայացնում ավելի քան 40 թուրք լրագրողների և հեղինակների դեմ «թրքությանը վիրավորանք հասցնելու» համար: ⁴⁷ Նա հայց ներկայացրեց վիպասան Օրհան Փամուկի դեմ այն մեկնաբանությունների համար, որ նա արել էր հայերի և քրդերի ջարդերի վերաբերյալ շվեցարական թերթերից մեկին տված հարցազրույցում: 2006թ. սեպտեմբերին Քերինչիզը դատական գործ բացեց գրող Էլիֆ Շաֆակի դեմ այն պնդումներով, թե նրա «Ստամբուլի ապօրինի զավակը» վեպը հայկական քարոզչություն է: Մեղադրանքները հիմնված էին գեղարվեստական կերպարների հայտարարությունների վրա: «Կերպարները կարող են վեպում գեղարվեստական լինել, բայց հեղինակներն իրական են», նշում էր Քերինչիզը: «Մեր մշակույթում ոչ ոք չի կարող իր նախնիներին մարդասպան անվանել»: ⁴⁸ Երբ 2006թ. Փամուկին գրականության ասպարեզում Նոբելյան մրցանակ շնորհվեց, Քերինչիզը դրա տակ տեսնում էր Թուրքիայի դեմ ուղղված դավադրության նախանշաններ:

«Այս մրցանակը պարզն է այն ստերի համար, որ նա ասում է այսպես կոչված ցեղասպանության վերաբերյալ...Այս ամենը Թուրքիան մասնատելու Եվրոպայի դավադրության մաս է, ինչպես որ նրանք 90 տարի առաջ արեցին: Նրանք ուզում

⁴⁵ Andrew Purvis, “Continental Divide”, *Time*, 2 հոկտեմբեր 2005.

⁴⁶ *haber7*, “Konferans bitti tartışma bitmedi!” [Գիտաժողովն ավարտվել է, բայց քննարկումները՝ ոչ], 27 սեպտեմբեր 2005.

⁴⁷ Քրեական օրենսգրքի 301 հոդվածը նշում է. «Այն անհատը, ով հրապարակավ պախարակում է թրքությանը, Թուրքիայի հանրապետությանը կամ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովին ենթակա է բանտարկության պատժի 6 ամսից մինչև մեկ տարի ժամկետով»: Այս կետը վերափոխվեց 2008 թ. ԵՄ ծանր ճնշումների ներքո, բայց «թուրք ազգին» վիրավորելը շարունակում է մնալ որպես հանցանք: Թուրքական համակարգի համաձայն յուրաքանչյուր քաղաքացի կարող է համաձայն Քրեական օրենսգրքի դատական բողոք ներկայացնել:

⁴⁸ Sarah Rainsford, “Turkish novelist case collapses”, *BBC News*, 21 սեպտեմբեր, 2006

են մեր հողը տալ հայերին, քրդերին և հույներին: Փամուկը և նրա սիրելի եվրոպացիները Թուրքիայի թշնամիներն են»:⁴⁹

Բայց Քերինչիզի ամենակատաղի հարձակումները պահվելէին թրքահայ լրագրող և խմբագիր Հրանտ Դինքի դեմ օգտագործվելու համար, ով երկար ժամանակ թուրք-հայկական համերաշխության կոչ էր անում: Ազգայնամուլ լրատվամիջոցներն արատավոր արշավ սկսեցին Դինքի դեմ՝ նրան անվանելով «թուրքերի թշնամի»: Նա զգալի քանակությամբ մահվան սպառնալիքներ պարունակող նամակներ ստացավ: 2006թ. հոկտեմբերին այն բանից հետո, երբ Դինքի դեմ գործ էր հարուցվել Քերինչիզի կողմից, նա ստացավ վեցամսյա պայմանական պատիժ «թրքությունը նսեմացնելու համար»: (Քերինչիզը բողոքարկեց որոշումը: Ըստ նրա, այն չափազանց մեղմ էր):⁵⁰

Դինքը այդ հետապնդումները համարում էր մի մաս առավել ընդարձակ պատասխանի «այն մեծ ուժի կողմից, որը մեկընդմիջտ որոշել էր ինձ իմ տեղը դնել...ինձ առանձնացնել, թուլացնել և անպաշտպան թողնել»: Դինքն իր ընկերներին ասել էր, որ հատկապես ահաբեկված է զգում Վելի Կուչուկից, ով նախկին գեներալ էր և արմատական ազգայնամուլ, և դատավարությունների ժամանակ հայտվում էր Քերինչիզի հետ միասին: Նա մտածում էր հեռանալ Թուրքիայից, բայց որոշեց այդ կերպ չվարվել «Թուրքիայում ունեցած այն հազարավոր ընկերների նկատմամբ ունեցած հարգանքից ելնելով, ովքեր շարունակում են պայքարել հանուն ժողովրդավարության և ովքեր աջակցում են մեզ: Մենք պատրաստվում ենք մնալ և պատրաստվում ենք դիմադրել»:⁵¹

Նախատեսվում էր, որ Դինքը դատարանում կհայտնվի 2007թ. մարտին: 2007թ. հունվարին նրան սպանեցին Ազոսի գրասենյակի առջև: Սա քրիստոնյաների դեմ ուղղված սպանությունների շարքից մեկն էր, ներառյալ Տրապիզոնում իտալացի հոգևորականի սպանությունը (2006), Մալաթիայում մի գերմանացու և երկու թուրքերի սպանությունները (2007):

Դինքի սպանության հասարակական պատասխանը ցույց տվեց, որ Թուրքիան փոխվել է: 2002թ. թրքահայ լրագրող Հրանտ Դինքը դատի էր ենթարկվել Ուրֆայում, քանի որ գիտաժողովի ժամանակ նա հայտարարել էր. «Ես թուրք չեմ...այլ Թուրքիայի հայ»: ⁵² «Մենք բոլորս հայ ենք» կարգախոսը դարձավ համերաշխության արտահայտություն Ստամբուլի հարյուր հազարավոր քաղաքացիների համար:

⁴⁹ Dorian Jones, “Nobel Prize angers Turkey’s nationalists”, *Network Europe*, 20 հոկտեմբեր 2006

⁵⁰ Robert Mahoney, “Bad Blood in Turkey”, *cpj*, գարուն/ամառ 2006

⁵¹ Hrant Dink, “A pigeon-like unease of spirit”, *Open Democracy*, 22 հունվար 2007

⁵² Hrant Dink, “A pigeon-like unease of spirit”, *Open Democracy*, 22 հունվար 2007

Ստամբուլում հսկայական ցույցեր տեղի ունեցան: Դինքի թաղման արարողությանը հետևում էր ուս ուսի տված թուրքերից, քրդերից, հայերից և այլ խմբերից բաղկացած հոծ թափուր:

Գ. Դեպի զգոն քննարկում

Այդ ժամանակ թուրքական ժողովրդավարության դեմ ուղղված սպառնալիքը, փաստորեն, ավելի լուրջ էր, քան որևէ մեկի մտքով կանցներ: 2008թ. հունվարին նորություններում գերիշխող էր տեղեկատվությունը, որ թուրքական ոստիկանությունը ծավալուն գործողություն է նախաձեռնել զաղտնի ծայրահեղական ազգայնամուլական «Էրգենեկոն» անունով ցանցի դեմ: Հետաքննության արդյունքում, որն սկսվեց 2007թ. ամռանը Ստամբուլի ՌԻ-մոսնիյե թաղամասի մի տնից գենքերի հայտնաբերումից հետո, մինչ օրս 142 անձի մեղադրանք է ներկայացվել կառավարությունը տապալելու դավադրության կասկածով: Դրանց թվում են ականավոր աջակողմյան լրագրողներ և գիտնականներ, պաշտոնաթող գեներալներ և անվտանգության ծառայությունների ներկայացուցիչներ, որոնց թվում էին մարդիկ, ովքեր Հրանտ Դինքին ամենաշատն էին վախեցրել՝ Վելի Կուչուկը և Քեմալ Քերինչիզը: Մի շարք լրագրողներ պնդել են, որ Դինքի սպանությունը մեկն է այն շարքից, որոնք կապված են «Էրգենեկոնի» հետ, սպանությունները կազմակերպության ռազմավարության մաս են եղել պետական հեղաշրջում իրականացնելու ճանապարհին: Հետանությունը դեռ շարունակվում է:

Ազգայնամուլական հակահարվածը մի շարք նոր ձախողումներ ունեցավ: Էմին Չոլասանն ազատվեց Hurriyet թերթից 2007թ. օգոստոսին: 2008թ. օգոստոսին կառավարությունը հեռացրեց ազգայնական Յուսուֆ Հալաջօղլուին Թուրքական պատմագիտական ընկերության ղեկավարի պաշտոնից:⁵³ Էրգենեկոնի դատավարության ընթացքում թուրքական քաղաքացիական հասարակությունն ավելի համարձակ դարձավ: 2008թ. դեկտեմբերի 15-ին թուրք մտավորականները նախաձեռնեցին համացանցային արշավ հետևյալ տեքստով.

«Իմ խիղճը չի ընդունում, որ մենք անհաղորդ մնանք և ուրանանք Մեծ Եղեռնը, որին Թուրքիայի հայերը ենթարկվել են 1915թ.: Ես մերժում եմ այդ անարդարությունը, կիսում հայ եղբայրներիս և քույրերիս զգացմունքներն ու ցավը և ներողություն խնդրում նրանցից»:⁵⁴

⁵³ *Today's Zaman*, “Ali Birinci new TTK president”, 2 օգոստոս 2008

⁵⁴ Վեր կայքը <http://www.ozurdiliyoruz.com/foreign.aspx>.

Սկսելով 230 ակնառու մտավորականների ստորագրություններով [ozurdilivorus](#) (ներողություն ենք խնդրում) համացանցային կայքով,⁵⁵ արշավի կազմակերպիչները մինչ օրս հավաքել են 30.000 ստորագրություններ: Արշավը նաև առաջ բերեց ավանդական դատապարտումներ: «Ես ամաչում եմ այն մարդկանց համար, ովքեր նախաձեռնեցին այս արշավը», ասաց Ազգայնական Շարժում Կուսակցության (MHP) առաջնորդ Դեվլեթ Բահչելին: Գեներալ Մեթին Գուրակը՝ Գլխավոր շտաբի հասարակայնության հապերի վարչության ղեկավարը, 2008թ. դեկտեմբերի 19-ին մամուլին հայտնեց, որ «այս ներողությունը սխալ է և այն կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ»: Պաշտոնաթող ղեսպանների մի խումբ հայտարարեց, «այսօր հայկական ահաբեկչությունն իր առաքելությունն ի կատար է ածել: Մենք տեղյակ ենք, որ նախագծի երկրորդ փուլը ներառում է ներողամտությունը և հաջորդ քայլը կլինի տարածքների պահանջը և փոխհատուցումները»: Վարչապետ Էրդողանը իրեն հեռացրեց ներողության արշավից. «Մենք հանցանք չենք գործել, հետևաբար մենք կարիք չունենք ներողություն հայցելու»: ⁵⁶ Սակայն Անկարայի գլխավոր դատախազը մերժեց դատական վարույթ բացել նրանց դեմ, ովքեր միացել էին համացանցային այդ արշավին: ⁵⁷ Նախագահ Աբդուլա Գյուլն ընդգծեց, որ «յուրաքանչյուրն ազատ է արտահայտել իր տեսակետը»: Չենգիզ Աքթանը, որը ազատական հայացքների տեր մտավորական է և ներողության արշավի նախաձեռնողներից մեկը, ընդգծեց, որ դա ավելի երկարատև գործընթացի ընդամենը սկիզբն է. «եկող հարյուրամյակները, զրեթե ամեն տարի մինչև 2023թ. և դրանից հետո, մեզ հնարավորություն կտան տեղեկանալ և հիշել հայերի ճակատագրի մասին»:⁵⁸

Թուրքիայի ներքին վերափոխումը դեռևս լիակատար չէ: «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը» դեռևս գոյություն ունի: Դեռևս գոյություն ունեն թանգարաններ և հուշարձաններ, որ հիշատակում են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի կողմից թուրքերի կոտորածների մասին, բայց Անատոլիայում չկա գեթ մեկ հուշարձան՝ նվիրված ազգությամբ հայ զոհերին: 2009թ. Ռաջիբ Զարակոլուն դատապարտվեց հինգ ամիս ազատազրկման (որը փոխարինվեց 400 թուրքական լիրայի տուգանքի) «Ճշմարտությունը մեզ ազատ կարձակի» գրքի թուրքերեն թարգմանությունը հրատարակելու համար, գիրք, որը գրվել է հայ հեղինակի կողմից 1915թ. Անատոլիայում իր ընտանիքի պատմության մասին: Զարակոլուն դիմում է Մարդու

⁵⁵ Այս դիրքորոշումների գնահատականի մասին, Yasemin Congar, "Özür Diliyorum, cünkü..." (Ես ներողություն եմ խնդրում, որովհետև...), *Taraf*, 12 դեկտեմբեր 2008.

⁵⁶ *Hurriyet*, "Turkish PM says apology campaign to Armenian unacceptable"

⁵⁷ *Bianet*, "Investigation Ruled Out for Signatories to The Apology to Armenians"; 27 հունվար 2009.

⁵⁸ *Agos* on 24 փետրվար 2009

Իրավունքների Եվրոպական Դատարան: ⁵⁹ Վերջիվերջո, Էրզենեկոնի դատավարությունը նոր է սկսվել, և պարզ չէ, թե Հրանտ Դինքի սպանության համար պատասխանատու մարդիկ կբացահայտվեն:

Բայց քննարկումներն արդեն էապես փոխվել են: Թուրք հեղինակ և լրագրող Մուրադ Բարդակչին 2009թ. սկզբին հրատարակեց «Թալեաթ փաշայի մնացած փաստաթղթերը»: Այս փաստաթղթերը, որ ժամանակին պատկանել էին Մեհմեդ Թալեաթին՝ հայերի տեղահանությունների և կոտորածների ամենակարևոր ճարտարապետին, ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրությունում մինչ 1915թ. առկա հայկական բնակչության թիվը 1.256.000-ից երկու տարի անց նվազեց 284.157-ի: 1915թ. և 1916թ. միջև ընկած ժամանակահատվածում 972.000 օսմանյան հայեր անհայտացել են բնակչության թվի վերաբերյալ պաշտոնական արձանագրություններից:⁶⁰ Ինչպես 2009թ. մարտին New York Times-ն է գրում.

«Պարոն Բարդակչին ասաց, որ նա պահել է այս փաստաթղթերը շատ երկար ժամանակ՝ 27 տարի, քանի որ նա սպառում էր, թե երբ Թուրքիան կհասնի այն կետին, որ նրանց հրատարակելը մոլեգնություն չի առաջացնի»:

Մուրադ Բարդակչին նաև այդ թերթին ասել էր, որ. «ես երբեք չէի կարողանա այս գիրքը հրատարակել 10 տարի առաջ, ես կկոչվեի դավաճան: Մտածողությունը փոխվել է»:⁶¹

2004թ. Թաներ Ակչամը կարող էր գրել, որ «ընդհանուր առմամբ ընդունվում է, որ հույների, հայերի և քրդերի դեմ բռնությունների վերաբերյալ քննարկումները Թուրքիայում տարու են...Զգացվում է, որ ցանկացած փորձ այս լուրջության պատը քանդելու ուղղությամբ առաջացնում է երբևէ պատկերացնելի ամենախիստ դատողությունները»:⁶² Սակայն ուղիղ հինգ տարի անց Հալիլ Բերկթայը կարող էր գրել.

«Ծայրահեղ ազգայնականության գազաթն անցել է: Հեղաշրջումը կանխվեց: Յուսուֆ Հալաջօղլուն հեռացել է (պատմագիտական ընկերությունից), որը շատ կարևոր է: «Էրզենեկոնի» դատավարությունը ևս ազդեցություն է գործում: ԱՄՆ և ԵՄ դիրքորոշումները որոշակի հետևանք են ունեցել: Այնուհետև Հրանտ Դինքի մահը և հուղարկավորությունը տեղի ունեցավ: Այսօր մենք լրիվ այլ Թուրքիա ունենք: Ես Taraf ում հոդվածներ եմ գրում ցեղասպանության վերաբերյալ: Որևէ աղմուկ չկա:

⁵⁹ Erdinç Ergenc, “*Değişen 301 sonrası ilk ceza Zarakolu’na*” [301-ի բարելավումից հետո առաջին պատիժը գնում է Զարակոլույին], *Sabah*, 19 հունիս 2008.

⁶⁰ Գրքի վերնագիրն է *Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi*, 2008

⁶¹ *New York Times*, “*Nearly a Million Genocide Victims, Covered in a Cloak of Amnesia*”, 8 մարտ 2009

⁶² Taner Akcam, *From Empire to Republic*, 2004, էջ 209

Հոգեբանական ահաբեկչություն հասարակության մեջ չի լինում, երբ զգոն քննարկում են վարում: Անադմուկ, բայց խորը կարգավորում է տեղի ունենում»:⁶³

III. Թուրքական դիվանագիտության հաջողությունը և ձախողումը

Ա. «Ոչ մի խնդիր հարևանների հետ»

Բրիտանացի գիտնական Ֆիլիպ Ռոբինսը մի անգամ գրել է. «պատմությունը հուշում է թուրքերին կասկածամիտ լինել հատկապես իրենց հարևանների նկատմամբ, որոնք փափագում են իրենց տարածքները կամ փորձում են ազգի մեծությունը փոշիացնել նենգ միջոցներով»:⁶⁴ 1995թ. նախկին փոխարտգործնախարար Շուքրու Էլեքդաղը եզրահանգել է, որ «հիմնավոր պատճառներ կան Թուրքիայի համար հարևաններին կասկածանքով և որպես սպառնալիքի աղբյուր դիտարկելու համար: Այս հարևաններից երկուսը՝ Սիրիան և Հունաստանը, որոնք Թուրքիայի կենսական շահերի նկատմամբ պահանջներ են ներկայացնում, Թուրքիայի համար ուղղակի սպառնալիք են»:⁶⁵ 1998թ. Հայաստանի, Հունաստանի և Իրանի միջև համագործակցության աճի տպավորությունը այնպիսի ջղաձգություն առաջացրեց Թուրքիայում, որ արտգործնախարար Իսմայիլ Ջեմը մեկնեց Թեհրան և մեղադրեց Հունաստանին «նոր խաչակրաց արշավանքում մասնակցելու համար մահմեդական զինվորներ հավաքագրելու» մեջ:⁶⁶ 1990-ական թթ. վերջին Ռազմական ակադեմիայի հրամանատար, գեներալ Նահիլ Սենողլուն երիտասարդ սպաների խմբին դիմելիս ասաց. «Թուրքիան շրջափակված լինելով ներքին և արտաքին թշնամիներով՝ աշխարհում բոլորից միայնակ երկիրն է»:⁶⁷

Տասնամյակի ավարտին շատ քիչ բան էր ակնարկում, որ ԵՄ-ն, առավել պակաս Հունաստանը կարող էին ընկալել Թուրքիային որպես հեռանկարում ԵՄ անդամ երկրի, կամ որ Թուրքիան կկարողանար էապես բարելավել իր հարաբերությունները Սիրիայի հետ: 1999թ. սկզբին Անկարայի և Աթենքի միջև հարաբերություններն ամենացածր կետին էին հասել: 1999թ. փետրվարի 14-ին ԱՄՆ նախագահ Բիլ

⁶³ Եվրոպական կայունության նախաձեռնություն, հարցազրույց, 2009 մարտ

⁶⁴ Philip Robins, *Suits and Uniforms: Turkish Foreign Policy since the Cold War*, 2003, էջ 135.

⁶⁵ Sükrü Elekdağ, “2 1/2 War Strategy”, *Perceptions*, հատոր 1, մարտ-մայիս 1996.

⁶⁶ Philip Robins, *Suits and Uniforms: Turkish Foreign Policy since the Cold War*, 2003, էջ 171

⁶⁷ Մեջբերված է <http://www.iss.europa.eu/uploads/media/cp092.pdf>

Քլինթոնը այնքան հեռու գնաց, որ տեսակետ հայտնեց, որ ՆUSO-ի երկու դաշնակից պետությունները, ունենալով փոխադարձ վստահության պակաս, կարող են պատերազմի մեջ ներքաշվել Կոսովոյի բռնությունների պատճառով: Հենց հաջորդ օրը թուրք հատուկ ջոկատայինների մի խումբ ձերբակալեց ՔԲԿ առաջնորդ Աբդուլա Օջալանին Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում՝ այդ գործընթացում ի ցույց դնելով Թուրքիայի «համար մեկ հասարակական թշնամուն» ապաստան տրամադրելու գործում Աթենքի դերակարատարությունը: Օջալանը թաքնվում էր Հունաստանի դեսպանատանը:

Իրավիճակը չէր կարող ավելի վատթար դառնալ և չդարձավ: Հունաստանի արտգործնախարարը, որը պատասխանատու էր Օջալանի գործով զբաղվելու հարցում, աշխատանքից ազատվեց, նրա տեղը զբաղեցրեց Գիորգիոս Պապանդրեուն, որը հայտնի էր որպես հույն-թուրքական մերձեցման կողմնակից: 1999թ. օգոստոսին մեծ երկրաշարժ տեղի ունեցավ Թուրքիայի Մարմարայի շրջանում: Սեպտեմբերին ավելի թույլ երկրաշարժ եղավ Աթենքում: Երկրաշարժերը շարքային թուրքերի և հույների միջև առաջացրին աննախադեպ մակարդակի համերաշխություն: Երկրաշարժերի արձագանքը ներքաղաքական հիմք ապահովեց Պապանդրեուի և Ջեմի միջև մի շարք դիվանագիտական նախաձեռնությունների, հանդիպումների համար, որոնք նոր հաշտեցման ոգու ճանապարհի հարթեցին:⁶⁸ 1999թ. դեկտեմբերի 10-11-ին անցկացված Հելսինկիի գագաթաժողովու Հունաստանը պաշտոնապես վերանայեց իր երկարատև ընդդիմությունը Թուրքիայի ԵՄ անդամակցության գործընթացի նկատմամբ: Թուրքիան պաշտոնապես դարձավ ԵՄ թեկնածու երկիր:

Արտաքին աշխարհի հետ Թուրքիայի հարաբերություններում հելսինկյան գագաթաժողովը շրջադարձային էր: ԵՄ թեկնածուի կարգավիճակը ոչ միայն երկրի ներսում ժողովրդավարացման գործընթացի խթան հանդիսացավ, այլ նաև օգնեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը «կոշտ անվտանգությունից» «փափուկ ուժի» շեշտադրումներին ուղղելու գործում: Իհշան Դադին Թուրքիայի արտաքին քաղաքականության «Եվրոպականացումը» համարում է.

«Օրինակելի փոփոխություն ուժային քաղաքականությունից, որը հիմնավորված էր թշնամական միջավայրում գոյության փնտրտուքով, դեպի ազատական արտաքին քաղաքականության օրակարգ, որը տարածաշրջանի երկրները դիտարկում է ոչ որպես հակառակորդներ, այլ գործընկերներ՝ առաջնայնությունը տալով համագործակցությանը և «փափուկ ուժին», քան հակամարտությանը, ռազմական ուժին և սպառնալիքներին»:⁶⁹

⁶⁸ F. Stephen Larrabee and Ian O. Lesser. *Turkish Foreign Policy in an Age of Uncertainty*. Rand, Santa Monica, 2003.

⁶⁹ Ihsan Dagi, “The liberal turn in Turkish foreign policy”, *Today's Zaman*, 23 փետրվար 2009

Ըստ Քեմալ Քիրիսչի, ԵՄ-ին «հաջողվեց Թուրքիայի «ամենաթողության մշակույթի» վրա ազդեցություն գործել՝ տեղափոխելով երկիրը Հոբսայան աշխարհից դեպի Կանտյան աշխարհ»:⁷⁰

ԱԿՔ-ի կառավարությունը, որն իշխանության դեկին է 2002թ. ից սկսած, ևս ընկալում էր, որ Թուրքիայի բազմաթիվ անհամաձայնություններն իր հարևանների հետ նվազեցնում էին նրա կարողությունները միջազգային հարաբերություններում ավելի մեծ դերակատարություն խաղալու գործում: Ահմեդ Դավութոզլուն՝ կուսակցության արտաքին քաղաքականության հիմնական գործիչներից մեկը, դեռ 2001թ. գրել էր.

«Շարունակ իր հարևան երկրների հետ ճգնաժամի մեջ գտնվող երկրի, համար անհնար է ունենալ տարածաշրջանային և գլոբալ արտաքին քաղաքականություն... Հատկապես մեր տարածաշրջանում, որտեղ բռնատիրական վարչակազմերն են տարածված, հաղորդակցության միջոցների բարելավումը, միջ-սահմանային առևտրի ընդլայնումը, մշակութային փոխանակումների ծրագրերը և աշխատանքի ու կապիտալի շարժը հեշտացնելը... կնպաստեն այն խնդիրների հաղթահարմանը, որոնք առաջանում են կենտրոնական վերնախավերի դերակատարումից»:

ԱԿՔ-ի կառավարությունը հասկացավ, որ «փափուկ ուժն» առաջարկում է ավելի արդյունավետ միջոց ազգային շահերն առաջ տանելու համար: Վարչապետ Էրդողանը հռչակեց «ոչ մի խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը, կամ, ինչպես նա 2008թ. նոյեմբերին էր ասել, «ձեռք բերել ընկերներ և ոչ թե թշնամիներ»:⁷¹ Ինչպես կյանքը ցույց տվեց, դրանք դատարկ խոսքեր չէին: Նախորդ մի քանի տարիների ընթացքում Թուրքիան բարելավել է հարաբերությունները գրեթե բոլոր հարևանների հետ, հատկապես Ռուսաստանի, Սիրիայի, Իրանի, Իրաքի և Հունաստանի: Թուրքիան և Սիրիան վերջ դրեցին կես դար շարունակվող տարածքային վեճին համաձայն 2008թ. մայիսին կնքված պայմանագրի:⁷² Անգամ Կիպրոսի խնդրում Թուրքիան իր աջակցությունն արտահայտեց Անանի պլանի վերաբերյալ, որը 2004թ. առաջարկում էր ֆեդերատիվ լուծում, սակայն Կիպրոսի հույները մերժեցին այն:

Զուգահեռաբար Թուրքիան նախաձեռնել է մի շարք հավակնոտ և գովելի միջնորդական առաքելություններ՝ լիբանանյան խմբակցությունների, Իրաքի և իր հարևանների, Սիրիայի և Իսրայելի միջև: Առևտրային գործարքների իրականացման

⁷⁰ Kemal Kirisci, “Turkey’s foreign policy in turbulent times”, European Union Institute for Security Studies (EUISS) Chaillot Paper – n°92, September 2006

⁷¹ Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայյպ Էրդողանի ելույթը Բրուքինգսում, ԱՄՆ, “[The Future of Turkish-American Relations Acting Together with a Common Vision](#)”, 14 նոյեմբեր 2008

⁷² Ercan Yavuz, “Turkey and Syria settle decades-old property dispute”, *Today’s Zaman*, 3 մարտ 2009.

ձևերի մեջ ևս շոշափելի փոփոխություններ տեղի ունեցան, որն այլընտրանքային արտաքին քաղաքական փաթեթի մաս է: Սկսած 2002թ. արտահանումը հարևան և սևծովյան ավազանի երկրներ (Բուլղարիա, Հունաստան, Սիրիա, Իրաք, Իրան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Ռումինիա, Ուկրաինա) տարեցտարի աճել են՝ ընդհանուր արտահանման ծավալում 2002թ. 11%-ից 2008թ. հասնելով 20%-ի: Ներմուծումն այս երկրներից նույն ժամանակահատվածում 15.5%-ից հասել է 27.6%-ի:

Թուրքիայի արտաքին քաղաքական ձեռքբերումները բարելավել են թե նրա միջազգային համբավը և թե գլոբալ ազդեցության մակարդակը: Այս դիրքի արտացոլում է այն հանգամանքը, որ 2009թ. ապրիլին ԱՄՆ նախագահը իր առաջին արտերկրյա այցի ընթացքում նախընտրեց այցելել Թուրքիա:

Սկզբունքորեն այն քաղաքականությունը, որն ուղղված է հարևան երկրների հետ ակտիվ հարաբերությունների հաստատմանը պետք է որ պարտադրեր հարաբերությունների կարգավորում Հայաստանի հետ: Բայց այդպես չէ: Ալի Բաբաջանը մի անգամ ասել է.«Թուրքիան ցանկանում է տարածաշրջանում տեսնել խաղաղություն, կայունություն, անվտանգություն և բարգավաճում, սակայն, ինչպես գիտեք, Հայաստանի հետ մեր հարաբերությունները այդ բանաձևի մեջ չեն տեղավորվում»:⁷³ Դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն ուղղված բանակցությունները, որոնք ընթացքի մեջ էին դեռ 1992թ.-ին, նախ զոհ գնացին Լեռնային Ղարաբաղի համար հայ-ադրբեջանական պատերազմին: 1992թ. փետրվարին Խոջալուի վրա հայկական հարձակումից հետո Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը բացեիբաց քննարկում էր Ադրբեջանին օգնության հասնելու և «հայերի առաջխաղացումը կանգնեցնելու» համար ուժ կիրառելու խնդիրը:⁷⁴ Երեք ամիս դեռ չանցած, հայերի կողմից Շուշիի գրավումից հետո վարչապետ Սուլեյման Դեմիրելը զգուշացրեց, որ Թուրքիան «չի կարող կողքից դիտորդի կարգավիճակ ընդունել հակամարտությունում»: 1993թ. ապրիլին ԼՂ հարակից շրջանները հայերի կողմից գրավելուն ի պատասխան Անկարան սառեցրեց դիվանագիտական հարաբերությունների և սահմանների հարցով բանակցությունները:

Նախորդ 15 տարիների ընթացքում Ադրբեջանի և Հայաստանի միջև չլուծված հակամարտությունը հայ-թուրքական հաշտեցման համար դարձել է խոչընդոտ: Թուրքիայի կողմից Հայաստանի հետ սահմանի փակումը քիչ է նպաստել ԼՂ խնդրի կարգավորմանը: Այն չի օգնել Ադրբեջանին և նվազեցրել է Թուրքիայի դերակատարությունը տարածաշրջանում: Այն նաև վնաս է հասցրել Թուրքիայի

⁷³ “Turkish FM invites Armenia for renewed dialogue”, *Hurriyet Daily News*, 21 ապրիլ 2008

⁷⁴ *Hurriyet*, 5 մարտ 1992

«փափուկ ուժի» քաղաքականությանը: Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության 2007թ. տվյալների Հայաստանից Թուրքիա արտահանումները կազմել են ընդամենը 3 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումները՝ 131 միլիոն ԱՄՆ դոլար (Հայաստան ընդհանուր ներմուծումների 4%):⁷⁵ Երկու երկրների միջև փակուղին շարունակում է վնաս հասցնել երկուսին էլ՝ թե դեպի ծով ելք չունեցող շրջապատված Հայաստանի Հանրապետությանը, և թե Թուրքիայի աղքատացած արևելյան նահանգներին: Այսպիսով ինչու՞ է Թուրքիայի հայաստանյան քաղաքականությունը մինչ օրս հեռու եղել տարածաշրջանի վերաբերյալ իր տեսլականից:

Բ. Ցեղասպանության դիվանագիտությունը

2005թ. մարտին ամերիկացի պատմաբան Ջասթին Մակքարտին, որը հայտնի է դարձել Բալկաններից և Կովկասից 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին թուրքերի վտարումների վերաբերյալ հրապարակումներով, հրավիրվել էր Թուրքիայի Ազգային Մեծ Ժողով՝ ելույթ ունենալու: Մակքարտին քաջալերեց թուրք օրենսդիրներին չխոնարհվել նրանց առաջ, ովքեր պնդում են, որ 1915թ. ցեղասպանության օրինակ է: Նա զգուշացրեց, որ զիջել, կնշանակի բաց անել հնարավոր կործանիչ հետևանքների դռները, թե դրամի և թե տարածքի տեսանկյունից: Հայկական ազգայնական օրակարգը մեկ դարից ավել չէր փոփոխվել:

«Առաջին, Թուրքիայի Հանրապետությունը պետք է հռչակի, որ եղել է «Հայոց Ցեղասպանություն» և ներողություն հայցի դրա համար: Երկրորդ, թուրքերը պետք է փոխհատուցում վճարեն: Երրորդ, հայկական պետություն պետք է ստեղծվի... Այնուհետև նրանք կպահանջեն, որ թուրքերը Հայաստանին հանձնեն Էրզրումը, Վանը, Ելազիզը, Սվազը, Բիթլիսը և Տրապիզոնը»:

Սա իր հերթին լրջագույն անդրադարձ կունենա արևելյան Անատոլիայի բնակչության վրա:

«Նոր «Հայաստանի» բնակչությունը լավագույն դեպքում 1/4-րդ ից էլ պակաս հայկական կլինի: Նման պետությունը երկար կկարողանա՞ գոյատևել: Այո, այն կկարողանա, բայց միայն եթե թուրքերն արտաքսվեն: Սա էր հայ ազգայնականների քաղաքականությունը 1915թ.ին: Դա կլինի նրանց քաղաքականությունը վաղը»:⁷⁶

⁷⁵ 2008 Statistical Yearbook of Armenia, <http://www.armstat.am/file/doc/99456368.pdf>

⁷⁶ Justin McCarthy, “The Reality of Armenian Issue”, Presentation at the TGNA Conference on March 24, 2005.

Մակքարտիի ելույթը բուռն ծափահարություններով ընդունվեց: Դա վերջին հաշվով Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկի հաստատումն էր: Նախորդ երեք տասնամյակներում Թուրքիան շարունակական փորձեր է ձեռնարկել իր դաշնակիցներին համոզելու, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը հավասարազոր կլինի ոչ միայն Թուրքիայի հասցեին ուղղված անարգանքի, այն նաև այն սպառնալիք է տարածքային ամբողջականությանը:

1980-ական թթ. Թուրքական պետությունը հսկայական քաղաքական կապիտալ է ներդրել Հայկական հարցի վերաբերյալ իր տեսակետները միջազգային ասպարեզում տարածելու համար: Այն ֆինանսավորել և ցուցակագրել է մի շարք հաստատությունների, ինչպես օրինակ Վաշինգտոնում գործող Թուրքական հետազոտությունների ինստիտուտը, որպեսզի նրանք առաջ տանեն իր օրակարգը: Այն նաև իր օրակարգն է առաջ մղում տպագիր մամուլի միջոցով: Օրինակ, երբ 1985թ. ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագիծ էր ընդգրկվել օրակարգ, Թուրքիան ֆինանսավորեց մի ամբողջ էջ ծավալով *New York Times*, *Washington Post* և *Washington Times* թերթերում 69 գիտնականների կողմից ստորագրված հայտարարությունը տարածելու համար առ այն, որ «քաղաքական և պետական գործիչները արարում են պատմությունը, իսկ գիտնականները՝ գրում են այն» և որ «դեռ շատ բան պետք է բացահայտվի, մինչև որ պատմաբանները կկարողանան հստակեցնել պատերազմի մասնակիցների և անմեղների միջև պատասխանատվությունը»: ⁷⁷ 2005թ. Անկարայի Առևտրի Պալատը ֆինանսավորեց *Sari Gelin* (Դեղին Հարսը) փաստագրական ֆիլմի 600.000 օրինակով տարածումը Եվրոպայում որպես *Times Magazine*-ի հավելված անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, լեհերեն և ռուսերեն լեզուներով: ⁷⁸ (Ամսագիրը ավելի ուշ ներողություն է խնդրել առանց բովանդակությունը ուսումնասիրելու ֆիլմը տարածելու համար):

Մինչև 1980-ական թթ. կեսերը թվում էր, թե թուրքական այդ քարոզչությունը հաջողությամբ էր պսակվում: 1965թ. Ուրուզվայի օրենսդիր մարմինն առաջինն էր, որ օրինագիծ ընդունեց «1915թ. Սպանված հայ նահատակված» հիշատակին: Բացի Կիպրոսից հաջորդ քսան տարիների ընթացքում ոչ մի այլ երկիր այդ օրինակին չհետևեց: Թուրքիան մի շարք հաղթաթղթեր ուներ իր տրամադրության տակ, այն Մառը պատերազմի ընթացքում ՆԱՏՕ-ի կարևոր անդամներից էր, երբ Հայաստանը Մովետական հանրապետություն էր: Լիբանանում հիմնված հայկական

⁷⁷ Մեջբերված է Guenther Lewy, *The Armenian Massacres in Ottoman Turkey – A Disputed Genocide*, 2005, էջ 261

⁷⁸ Առևտրի պալատի ղեկավար Սիման Այգունը ավելի ուշ այն նկարագրեց որպես կատարյալ հաջողություն, «մենք գոլ հարվածեցինք հայկական լոբբիի դեմ և գոլում հայտնվեց *Time Magazine* –ը», 13 նոյեմբեր 2005

ահաբեկչական խումբ ԱՄԱԼԱ-ն (Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակ), որը պատասխանատու էր թուրք դիվանագետների դեմ աշխարհի տարբեր մասերում մի շարք մահացու հարձակումների համար, կապում էր հայկական դատը մերձավորարևելյան արմատականության հետ: Թուրքիան ԱՄՆ Կոնգրեսում, Պետդեպարտամենտում և ամբողջ արևմտյան բիզնես աշխարհում ուներ հզոր բարեկամներ: Աշխարհաքաղաքական պատճառների բերումով այն նաև վայելում էր իսրայելամետ լոբբիի աջակցությունը: Ի լրացումն դրա, ինչպես Ադամ Ջոնսն է նշում, «լուռ համաձայնություն էր տիրում թուրքական և իսրայելական հասարակության քաղաքականապես հզոր շրջանակներում Հայոց ցեղասպանության խնդիրը դուրս մղելու հարցում՝ շեշտելով Հրեական Հոլոքոստի եզակիությունն ու անհամաչափելիությունը»:⁷⁹

Մակայն 1990-ական թթ. արևմտյան ժողովրդավարական երկրներում պատմական մեղքերի համար պաշտոնական ներողամտության հայցումը տարածում էր գտնում: Ամբողջ աշխարհում կառավարություններն ընդունում էին բարոյական պատասխանատվություն նախորդ սերունդների կողմից գործած քայլերի համար՝ անկախ նրանից, թե արդյոք դրանք պատերազմական ժամանաշրջանի գործողություններ էին, ստրկություն, թե բնիկների նկատմամբ բռնություններ: Թուրքիայում նման զարգացումների բացակայության պայմաններում Հայկական հարցը քննարկման առարկա էր դառնում մի շարք երկրների օրենսդիր մարմիններում, այդ թվում ԱՄՆ-ում և Ֆրանսիայում, Եվրախորհրդարանում, որոնցից մի քանիսը հայտարարություններ ընդունեցին՝ օգտագործելով «ցեղասպանություն» բառը:

Իրար հաջորդող թուրքական կառավարություններն այս հայտարարություններին վերաբերում էին որպես թշնամական ակտերի: Օրինակ, 2000թ. ԱՄՆ Կոնգրեսում լսումների ժամանակ Թուրքիայի նախկին դեսպան Գյունդուզ Աքթանը զգուշացրեց, որ ցեղասպանության վերաբերյալ բանաձևը կհանգեցնի Ինջիրլիկում (հարավային Թուրքիա) ԱՄՆ ռազմաօդային կայանի փակմանը: Հայաստանը ևս կտուժի.

«Պնդելով ցեղասպանության ճանաչումը հայկական ղեկավարությունը և սփյուռքը վերջնականապես կլռեցնեն Թուրքիայում մնացած մի քանի աջակից ձայներին: Մա վերջնականապես կհանգեցնի սահմանի փակմանը: Հայաստանի իրավիճակը հաշվի առնելով՝ հայկական կառավարության այս դիրքորոշումը հավասարազոր է ինքնասպանության»:⁸⁰

⁷⁹ Adam Jones, *Genocide – A Comprehensive Introduction*, 2006, էջ. 360.

⁸⁰ Դեսպան Գյունդուզ Աքթանի ելույթը Ներկայացուցիչների Պալատի Արտաքին Հարաբերությունների հանձնաժողովում, սեպտեմբերի 14, 2000

Այնուամենայնիվ, Թուրքիայի ցեղասպանության դիվանագիտությունը գրեթե ամբողջությամբ անհաջող է եղել: Միջազգային կարծիքի ալիքը ակնհայտորեն և անշրջելիորեն թեքվել է դեպի Հայոց ցեղասպանության ճանաչումը: Բարաք Օբաման կարող էր չօգտագործել այդ բառը 2009թ. ապրիլին Թուրքիա կատարած այցելության ժամանակ, բայց նա այդպես վարվել է նախկինում և շատ հավանական է, որ նա և աշխարհի այլ առաջնորդներ նորից այդպես կանեն ապագայում: Բայց հակառակ թուրքական վերնախավի մտավախությունների՝ դա հակաթուրքական զգացմունքների նշան չէ, այլ՝ առավելապես ցեղասպանության համաշխարհային ընկալման փոփոխության արտահայտություն:

Գ. Ցեղասպանության դարաշրջան

2007 թ. Անկարայում գործող Հայկական հետազոտությունների ինստիտուտն իր հրատարակություններից մեկում ընկալելի հաշտվողականությամբ նկատեց, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը հայկական ազգային օրակարգի հարցից վերածվել է գիտնականների համար հիմնականում գերակշռող տեսակետի:

«Վերջին տարիներին Հայկական հարցի կապակցությամբ ամենացայտուն, բայց ամենայն հավանականությամբ ամենապակաս նկատելի փաստը այն է, որ հայկական պնդումներն ավելի լայն ընդունելություն են գտնում արևմտյան գիտական շրջանակների կողմից...Այս գործընթացի վերջում, որը նման է արձագանքների շղթայի, ավելի շատ գիտնականներ են կարդում այդ հրատարակությունները և օգտագործում իրենց ուսումնասիրություններում»:⁸¹

Այս շղթայական արձագանքը մաս է կազմում այն գործընթացի, որով արևմտյան գիտական շրջանակներում ցեղասպանությունը որպես ուսումնասիրության նոր ոլորտ է ձևավորվում: 1980թ. Մոնրեալի համալսարանը երբևէ առաջին անգամ դասընթաց մտցրեց «ցեղասպանության պատմություն և սոցիոլոգիա» անվամբ: 1981թ. Լեո Կուպերի «Ցեղասպանություն. 20-րդ դարում դրա քաղաքական կիրառումը» գրքի տպագրությունից հետո ցեղասպանագիտությունն արագորեն զարգացում ապրեց: ԱՄՆ-ում և Եվրոպայում ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտներ ստեղծվեցին: 1997թ. հիմնադրվեց Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան: 1999թ. Իսրայել Չարնին հրատարակեց առաջին «Ցեղասպանության

⁸¹ Serdar Palabiyik, “Literature between Scientificity and Subjectivity A Comparative Analysis of the Books Written on the Armenian Issue”, *Review of Armenian Studies*, Number 11-12, Volume 4 – 2007

հանրագիտարանը», որը պարունակում էր 20 էջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ.⁸² 2002թ. Սամանթա Փաուերի՝ «Դժոխքից եկած խնդիր» վերնագրված գիրքը, որը պատմում է 20 դարում տեղի ունեցած ցեղասպանությունների՝ ԱՄՆ-ի կողմից կանխարգելման ձախողման մասին, շահեց թե Պուլիցերյան մրցանակը և թե գրքերի ազգային մրցանակաբաշխությունը:

Մինչև 1980թ. ցեղասպանության ուսումնասիրությունը հիմնականում կենտրոնանում էր Հոլոքոստի վրա: Երբ հայ պատմաբան Վահագն Դադրյանն առաջին անգամ գրեց «համեմատական ցեղասպանության» թեմայի վերաբերյալ, նա օգտագործում էր Հոլոքոստը որպես հիմնական օրինակ: Նույնն անում էին նաև նրան վատաբանողները: Թուրք գիտնականները մերժում էին ցեղասպանության պիտակավորումը՝ շեշտելով Հիտլերի և երիտթուրքերի քաղաքական ուղեգծերի տարբերությունները: Նրանց փաստարկները հիմնականում երկու թեզերի վրա էին կենտրոնանում: Առաջին, որ ի տարբերություն Հոլոքոստի, անհնար էր փաստել հայերին «ոչնչացնելու մտադրությունը» Օսմանյան ղեկավարության կողմից, քանի որ հայ բնակչության մի կարևոր մաս անվնաս էր մնացել Թուրքիայի որոշ մասերում: Ամերիկացի պատմաբան Գյունթեր Լեվին վերջերս հրատարակած իր գրքում ընդգծում է, որ

«Ստամբուլի, Զմյուռնիայի և Հալեպի մեծաքանակ հայկական համայնքները չենթարկվեցին տեղահանությունների և...պատերազմից հետո հիմնականում ամբողջապես պահպանվեցին.. Այս բացառությունները համանման են Հիտլերի ձախողմանը, որ նա չկարողացավ ընդգրկել Բեռլինի, Քյոլնի և Սյունիսենի հրեաներին ընդգրկել «Վերջնական լուծման» մեջ»:⁸³

Երկրորդ փաստարկն այն է, որ ի տարբերություն նացիստական Գերմանիայի հրեաների, հայերն ապստամբել էին Օսմանյան իշխանությունների դեմ, և հետևաբար չի կարելի նրանց համարել «անմեղ զոհ»: Ինչպես նշել է Գյունդուգ Աքթանը 2000թ. ԱՄՆ Կոնգրեսում, « տարածքի համար ընթացող պատերազմում նույնիսկ քաղաքացիական բնակչության սպանությունը ցեղասպանություն չէ:: Ցեղասպանության զոհերը պետք է բացառապես անմեղ լինեն»: Ըստ այս տեսակետի, քանի որ 1915թ. դեպքերը Հոլոքոստին համարժեք չեն, հետևաբար դրանք չեն կարող

⁸² Կարևորագույն աշխատությունները են Frank Chalk and Kurt Jonassohn's *History and Sociology of Genocide*; Samuel Totten et al. *Century of Genocide* երկուսն էլ տպվել են 90 ականների սկզբներին. Helen Fein, *Genocide: A Sociological Perspective*, 1993. Robert Gellately and Bein Kiernan, ed., *The Spectre of Genocide: Mass Murder in Historical Perspective*, 2003. And recently Adam Jones, *Genocide – A Comprehensive Introduction*, 2006

⁸³ Lewy, էջ. 251.

համարվել ցեղասպանություն, և այդ եզրի ցանկացած կիրառումը զուտ քաղաքական ենթատեքստ ուներ:⁸⁴

Մակայն այս փաստարկն անտեսում է այն հանգամանքը, որ միջազգայնորեն «ցեղասպանություն» տերմինը չի սահմանափակվում միմիայն «Հոլոքոստին համարժեք գործողություններով»: Այստեղ ելակետը Ցեղասպանության հանցանքի կանխարգելման և դրա համար պատժի Կոնվենցիան է, որն ընդունել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1948թ.: Կոնվենցիան սահմանում է «ցեղասպանությունը» որպես

«հետևյալ գործողություններից որևէ մեկը, որտեղ կա ամբողջովին կամ մասամբ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբ ոչնչացնելու մտադրությունը, ինչպես օրինակ՝ ա. Խմբի անդամներին սպանելը; բ. Խմբի անդամներին մարմնական կամ մտավոր լուրջ վնաս հասցնելը; գ. Խմբին միտումնավոր այնպիսի կենսապայմանների պարտադրումը, որոնք նպատակ ունեն նրա մասնակի կամ ամբողջական ոչնչացումը; դ. խմբի ներսում ծննդաբերությունը խոչընդոտող միջոցների իրականացումը, ե. Խմբի անդամների երեխաների ստիպողական տեղափոխությունը այլ խումբ»:

Այժմ մեծ քանակով դատական գործեր, պաշտոնական հայտարարություններ և գիտական հետազոտություններ կան, որոնք կիրառում են այս սահմանումը ողջ աշխարհում թե՛ պատմական և թե՛ ժամանակակից իրադարձությունների համատեքստում: 2003թ. նախկին Հարավսլավիայի գործով Միջազգային քրեական դատարանը հոլանդացի գիտնական Թոն Չվասանին հանձնարարեց ամփոփել «ցեղասպանագիտության ոլորտում առկա ընդհանուր հայտնագործությունները և վերլուծությունները»:⁸⁵ Չվասանը գտավ, որ 1980 ական թթ. սկսած կոնկրետ պատմական դեպքերի վերաբերյալ խորը հետազոտությունները հստակեցրել են, որ թեև Հոլոքոստը «անկասկած՝ երբևէ իրականացված տոտալ՝ կամ 'ամբողջական' ցեղասպանության ամենահամակարգված փորձն էր», այն չպետք է խոչընդոտի այլ առավել պակաս ամբողջական ցեղասպանությունների ճանաչմանը:⁸⁶

⁸⁴ Չվասանին ՄակՔարտիի էլույթը, Democratic Principles Association-ի կազմակերպած սեմինարին նվիրված հայ-թուրքական հարաբերություններին 15 մարտ 2001 /Մտանքուլ

⁸⁵ Չվասանը կազմեց այնպիսի հայտնի ուսումնասիրողների և գիտնականների ցուցակ, ինչպիսիք են Ռաուլ Հիլբերգը, Լեո Կուպերը, Ֆրանկ Չոկը, Կուրտ Յոնասոնը, Հելեն Ֆեյնը, Ռոբերտ Մելսոնը, Յեհուդա Բաուերը, Իսրայել Չարնին և այլն: Ton Zwann, “[On the Etiology and Genesis of Genocide and Other Mass Crimes Targeting Specific Groups](#)”, A Report presented to the Office of the Prosecutor of the International Criminal Tribunal for the Former Yugoslavia. Amsterdam Centre for Holocaust and Genocide Studies. University of Amsterdam/Royal Netherlands Academy of Arts and Sciences, November 2003. էջ 5.

⁸⁶ Cf. Robert Cribb, “Genocide in the Non-Western World Implications for Holocaust Studies”, in Steven L.B. Jensen (ed.), *Genocide: Cases, Comparisons and Contemporary Debates*, 2003, էջեր. 123-140.

«Փաստորեն բոլոր ցեղասպանությունները ինչ-որ տեղ 'մասնակի' են...Իհարկե հրեաների սպանությունների և Գերմանիայի օկուպացիայի ժամանակաշրջանում լեհական և ռուսական բնակչության նկատմամբ իրականացրած ցեղասպան քաղաքականությունների միջև շատ կարևոր տարբերություններ կան, բայց միաժամանակ պետք է ընդունել, որ այս բոլոր երեք դեպքերում էլ ցեղասպան քաղաքականություն է իրականացվել և ցեղասպան գործընթաց է տեղի ունեցել»:⁸⁷

1948թ. Կոնվենցիայի հիմնական արտահայտությունը «ամբողջապես կամ մասնակի» է: Ինչպես Յեղասպանագետների միջազգային ասոցիացիան է մատնանշել, «պարտադիր չէ, որ ոճրագործները մտադրություն ունենան ոչնչացնել ամբողջ խումբը: Խմբի միայն մի մասի ոչնչացումը (ինչպես օրինակ նրա կրթված անդամներին, կամ որոշակի տարածքում բնակվող հատվածին) ևս ցեղասպանություն է»:⁸⁸

Սա կիրառվել է դատարանների և հատուկ հանձնաժողովների ընդունած բազմաթիվ եզրահանգումներում: Գվատեմալայի պատմական պարզաբանումների հանձնաժողովը, քննելով 1970-80-ական թթ. բնիկ մայաների դեմ իրականացված բռնությունները, եզրահանգեց, որ «Գվատեմալա պետության ներկայացուցիչները 1981-83թթ. հակա-ապստամբական գործողություններ իրականացնելու շրջանակներում մայա ժողովրդի նկատմամբ իրականացրել են ցեղասպան գործողություններ»:⁸⁹ Կառավարության որոշումը, որով բոլոր մայացիներն ընկալվում էին որպես կոմունիզմի և ահաբեկչության կողմնակիցներ, ըստ զեկույցի, հանգեցրեց նրան, որ «անպաշտպան մայա համայնքների նկատմամբ իրականացվեցին զանգվածային ոչնչացման վայրագ գործողություններ, որոնք ազդեցիկ, ռասիստական և չափազանց դաժան էին»:⁹⁰

Նմանապես 1995թ. Բոսնիա-Հերցեգովինայում Սրբբենիցայի սպանող ևս համարվեց ցեղասպանություն, երբ բոսնիացի սերբերի ուժերը սպանեցին մոտ 8.000 մահմեդական տղամարդկանց: 2004թ. նախկին Հարավսլավիայի գործով Միջազգային քրեական դատարանը եզրակացրեց, որ «Յեղասպանության կոնվենցիայի նպատակն է կանխել ամբողջական մարդկային խմբերի նպատակամղված ոչնչացումը, և խմբի

⁸⁷ Zwaan, էջ 12.

⁸⁸ Կայք <http://www.genocidescholars.org/aboutgenocide.html>.

⁸⁹ Report, Paragraphs 122 – 123, <http://shr.aas.org/guatemala/ceh/report/english/toc.html>

⁹⁰ New York Times, 26 February 1999

թիրախ դարձած մասը պետք է նշանակալի լինի, որ ազդեցություն ունենա ամբողջությամբ վերցրած խմբի վրա»:⁹¹ Այն շարունակում է.

«Կոտորված տղամարդիկ կազմում էին Սրբերենիցայի ընդհանուր համայնքի 1/5-րդ մասը: Դատական ատյանը գտավ, որ, Սրբերենիցայում բոսնիացի մահմեդականների հասարակության հայրիշխանական առանձնահատկությունները հաշվի առնելով, տղամարդկանց այսպիսի քանակության բնաջնջումը անխուսափելիորեն կհանգեցնի Սրբերենիցայում բոսնիացի մահմեդականների ֆիզիկական ոչնչացմանը»:⁹²

Գիտնականները և դատարանները ևս հստակեցրել են «ոչնչացնելու մտայրություն» արտահայտության իմաստը: Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան գրում է.

«Մտայրությունն ուղղակիորեն կարելի է ապացուցել հայտարարություններից և հրամաններից: Բայց ավելի հաճախ այն բխում է կոորդինացված գործողությունների համակարգված բնույթից...Ինչ էլ որ լինի հանցանքի մոտիվը (տարածքի բռագավթում, ազգային անվտանգություն, տարածքային ամբողջականություն և այլն), եթե ոճրագործները գործողություններ են իրականացնում, որոնք նպատակ ունեն խմբի, կամ նույնիսկ դրա մի մասի ոչնչացումը, դա ցեղասպանություն է»:⁹³

Պարտադրված վերաբնակեցումը որոշ դեպքերում ևս նկարագրվել է որպես ցեղասպանություն, ներառյալ ամերիկյան հնդկացիների պարագայում: Գիտնականները պատմում են «ցեղասպան մահվան քարավանների մասին, առավել տխրահոյակ Չերոկի և Նավաջո ժողովուրդների 'արցունքների հետքերը', որոնց հետևանքով *en route* (*ճանապարհին*) սպանվեց թիրախ ընտրված բնակչության 20-ից 40%-ը»:⁹⁴ Իսպանական Ամերիկայում բնիկ ամերիկացիների ոչնչացումը քննարկելիս Ադամ Չոնսը նշում է.

«Երբ ստրուկները մահանում են ճանճերի նման քո աչքերի առջև հանքերում կամ պլանտացիաներում մի քանի ամիս աշխատելուց հետո, և երբ քո պատասխանը

⁹¹ ICTY, *Krstic Judgement*, 2004

⁹² ICTY, *Krstic Judgement*, 2004

⁹³ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան համացանցի կայք, <http://www.genocidescholars.org/aboutgenocide.html>.

⁹⁴ Adam Jones, *Genocide – A Comprehensive Introduction*, 2006, էջ. 75; James Wilson, *The Earth Shall Weep: A History of Native America*, 1998

այդ պայմանները փոխելուն չէ ուղղված, այլ ավելի շատ մարդկային կյանքեր է զոհաբերում դժոխքին, դա 'առաջին կարգի' ցեղասպանություն է»:⁹⁵

Քննարկման առարկա երկու խմբերի միջև հակամարտության պատմությունը կամ նաև որևէ պատճառահետևանքային կապը նախնական ագրեսիայի և դրան հետևող վրիժառության միջև չի բացառում ցեղասպանության ի հայտ գալը: Երբ Հութու խմբի ներողամտություն հայցողները պնդում էին, թե 1994թ. Ռուանդայի ցեղասպանությունը քաղաքացիական պատերազմի շարունակությունն էր և պաշտպանական գործողություն, որը նպատակ ուներ կանխարգելել Թուխինների կողմից ցեղասպանությունը (որին Հութուները ենթարկվել էին հարևան Բուրունդիում 1972թ.), Ռուանդայի համար ստեղծված Միջազգային քրեական դատարանը մերժեց այդ փաստարկը:

Այս մեկնաբանությունների միջոցով միջազգայնորեն ցեղասպանություն համարվող դրվագների թիվը շարունակաբար աճել է: Գիտական հանդեսներ, ինչպիսիք են «Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրություններ» և «Ցեղասպանության հետազոտությունների հանդեսը», այժմ ներկայացնում են հոդվածներ և քննարկումներ մ.թ.ա. 146թ. Հռոմեական Հանրապետության կողմից Կարթագենի դեմ իրագործված ցեղասպանության մասին, վաղ 20-րդ դարում Ավստրալիայի բնիկների ճակատագրի վերաբերյալ, հյուսիսային Կովկասում մահմեդականների դեմ ռուսական դաժանությունների մասին, Կամբոջայի, Ռուանդայի, Արևելյան Թիմորի, Բուրունդիի, Գվատեմալայի, Ուկրաինայի (Ստալինի օրոք) և Բոսնիայի ցեղասպանությունների վերաբերյալ: Օրինակ, 1999թ. Կոսովոյում ռազմական գործողություններ սկսելու ՆԱՏՕ-ի որոշման մեջ այն վճռական գործոն հանդիսացավ:

Ցեղասպանագիտությունը հետևաբար միմիայն «թուրքերին չի թիրախ ընտրել», ինչպես նշում են որոշ թուրք վերլուծաբաններ: Ընդհակառակը, հետազոտություններն ապացուցում են, որ 20-րդ դարում, որը հավանաբար ամենավայրագ դարաշրջանն է եղել մարդկային պատմության ընթացքում, ցեղասպանություն տեղի է ունեցել երկրագնդի գրեթե ցանկացած անկյունում:⁹⁶ Այս համապատկերի վրա դժվար թե գտնվեն որևէ հեղինակավոր գիտնականներ ցեղասպանագիտության ասպարեզում, ովքեր կկասկածեին, որ այն ինչ տեղի ունեցավ հայերի հետ 1915թ. ցեղասպանություն է: Այն մերժելը նշանակում է մարտահրավեր նետել անհամար գիտնականների, հանձնաժողովների, դատական ատյանների և կառավարությունների կողմից աջակցություն վայելող միջազգային համաձայնությանը: Դա այն համաձայնությունն

⁹⁵ Adam Jones, *Genocide – XXX*, էջ.83

⁹⁶ Eric D. Weitz, *A Century of Genocide*, 2003, էջ 9

է, որը Թուրքիայի դիվանագետները փորձել են հաղթահարել, սակայն հաջողություն չեն ունեցել:

Դ. Լքված դաշնակիցների կողմից՝

20-ից ավելի երկրներում ընդունվել են բանաձևեր, որոնք հիշատակում են 1915թ. կոտորածները որպես ցեղասպանություն՝ ասոաջ բերելով թուրք քաղաքական գործիչների և դիվանագետների զայրույթը Թուրքիայի անգամ ամենասերտ դաշնակիցներին աջակցությունը ստանալու անկարողության հետևանքով: Թուրքերն իրենց զգում են պարտված ակնհայտորեն անսահմանափակ ռեսուրսներ և քաղաքական ազդեցություն վայելող հայկական սփյուռքի կողմից: ՀԱՀԳԲ (ԱՍԱԼԱ)-ահաբեկիչների կողմից 1970-80 ական թթ. սպանված թուրք դիվանագետների մասին հիշողությունը այս պարտությանը դառնություն է հաղորդում՝ ամրապնդելով այն զգացողությունը, որ Թուրքիան է անարդարության զոհը:

Երբ 1998թ. մայիսին Ֆրանսիայի Ազգային Ժողովը ընդունեց մեկ նախադասությունից բաղկացած օրենք, որը նշում էր, որ «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը», ֆրանսահայերին համարեցին որպես մեղադրյալներ: ⁹⁷ Պատգամավորներից շատերը, ովքեր առաջին անգամ առաջադրեցին օրինագիծը իրականում ներկայացնում էին այնպիսի տեղամասեր, օրինակ ինչպես Փարիզի արվարձանները և Մարսելը, որտեղ առկա էր ֆրանսահայերի մեծ կենրոնացվածություն: Թուրք գրողներից Գյուրբուզ Էվրեն մեկնաբանեց, որ եթե Ֆրանսիայի բոլոր թուրք բնակիչները ֆրանսիական քաղաքացիություն ունենային, «ֆրանսիական օրենսդիր մարմինն օրինագիծ կընդուներ պնդելով, որ ոչ թե թուրքերն են կոտորել 1.5 միլիոն հայ, այլ հակառակը՝ հայերն են կոտորել թուրքերին»:⁹⁸

Թուրքիան հայկական սփյուռքին ահռելի հակառակորդ է համարում: Հայաստանից դուրս ամենամեծ հայկական համայնքները գտնվում են ԱՄՆ ում (ավելի քան 1.5 միլիոն, որի կեսը բնակվում է Կալիֆորնիայում), Ռուսաստանում (2 միլիոնից ավելի),

⁹⁷ Assemblée Nationale, “[Proposition de Loi adoptée par l’Assemblée Nationale en première lecture relative à la reconnaissance du génocide arménien de 1915](#)”, 29 մայիս 1998

⁹⁸ Mehmet Necef, “The Turkish Media Debate on the Armenian Massacres”, in Steven Jensen (ed.), *Genocide. Cases, Comparisons, and Contemporary Debates*, 2003, էջ 247.

Ֆրանսիայում (450.000), Վրաստանում (460.000) և Լիբանանում (234.000): Մեծ համայնքներ կան նաև Սիրիայում, Իրանում և Արգենտինայում:⁹⁹

Այնուամենայնիվ, այս բանաձևերից շատերը չեն կարող պատճառաբանվել հայկական սփյուռքի առկայությամբ, ոչ էլ որևէ բացահայտ հակաթուրքական զգացմունքներով: Ցեղասպանության վերաբերյալ օրինագծեր են ընդունվել փոքր հայկական համայնքներ ունեցող երկրներում՝ Լեհաստանում, որը Թուրքիայի վաղեմի դաշնակիցն է, Իտալիայում, Լիտվայում և Սլովակիայում:¹⁰⁰ Նիդեռլանդները, որտեղ Եվրոպայում թուրքերի ամենամեծ համայնքներից մեկն է գտնվում, ընդունեց ցեղասպանության վերաբերյալ օրինագիծ 2004թ., մի ժամանակ, երբ Նիդեռլանդների կառավարությունը որպես ԵՄ նախագահող երկիր, փորձում էր ժամկետ սահմանել Թուրքիայի ԵՄ անդամակցության բանակցություններում: 2005թ. հունիսին Գերմանիան, որը Եվրոպայում ամենամեծաքանակ թուրքական բնակչություն ունի, միաձայն ընդունեց խորհրդարանական հայտարարություն «1915թ. հայկական կոտորածների և արտաքսումների հիշողության և հիշատակման վերաբերյալ»:

Գերմանիան, որտեղ այդ ժամանակ իշխանության ղեկին կարմրա-կանաչների կռալիցիոն կառավարությունն էր Սոցիալ դեմոկրատ կանցլեր Գերհարդ Շրյոդերի և Կանաչների կուսակցությունից արտաքին գործերի նախարար Յոշկա Ֆիշերի ղեկավարությամբ, Թուրքիայի ամենասերտ եվրապական դաշնակիցներից մեկն էր: Բեռլինը պայքարել էր նրա համար, որ Թուրքիան ԵՄ թեկնածու անդամ դառնա 1999թ.: 2000թ. այն բարեփոխեց Գերմանիայի քաղաքացիության մասին օրենքը, որով հեշտացրեց Գերմանիայում հարյուր հազարավոր թուրք բնակիչների գերմանական քաղաքացիություն ստանալու (և այդպիսով ընտրողներ դառնալու) գործընթացը: 2004թ. այն մեծապես աջակցեց Անկարային ԵՄ անդամակցության բանակցությունները սկսելու խնդրում:

Բայց և այնպես Բունդեստագի ընդունած տեքստը, որը համատեղ առաջադրվել էր Սոցիալ Դեմոկրատական, Քրիստոնեա Դեմոկրատական, Կանաչների և Ազատ ժողովրդական կուսակցությունների կողմից հստակ էր.

«Գերմանական Բունդեստագը...ցավում է Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի արարքների համար, որոնք հանգեցրեցին Անատոլիայում հայերի զրեթե լրիվ բնաջնջմանը»:¹⁰¹

⁹⁹ <http://www.armeniadiaspora.com/followup/population.html>

¹⁰⁰ Շուրջ 92,000 հայեր են բնակվում Լեհաստանում, մոտ 2,500 Իտալիայում և Լիտվայում և ավելի պակաս՝ Սլովակիայում <http://www.armeniadiaspora.com/followup/population.html>

¹⁰¹ German Bundestag, 15th electoral term, Motion tabled by the parliamentary groups of the SPD, CDU/CSU, ALLIANCE, 90/THE GREENS and the FDP, “Remembering and commemorating the expulsions and massacres of the Armenians in 1915 – Germany must make a contribution to

Բանաձևը ներառում է ակնարկ ցեղասպանությանը առ այն, որ «բազմաթիվ անկախ պատմաբաններ, օրենսդիր մարմիններ և միջազգային կազմակերպություններ ճանաչել են հայերի արտահանումները և ոչնչացումը որպես ցեղասպանություն»:¹⁰² Այն եզրահանգում է, որ Թուրքիայի հերքման քաղաքականությունը «հակասում է հաշտեցման գաղափարին, որը Եվրամիությունում առկա արժեհամակարգի հիմնաքարն է»:¹⁰³

Հազվադեպ են թուրքական ցեղասպանության դիվանագիտության թերություններն ավելի ակնհայտ եղել, քան այս բանաձևը տապալելու փորձերի ժամանակ: Գերմանիայում Թուրքիայի դեսպան Մեհմեդ Ալի Իրտենչելիկը բանաձևի աջակիցներին մեղադրեց, որ «գործում են իբրև ֆանատիկ հայկական ազգայնականության խոսնակներ, որն ամբողջ աշխարհում օգտագործում է կազմակերպած ահաբեկչություն»: Թուրքիայի ԱԳՆ-ն ավստսանքով նշեց, որ «մեր զգուշացումներից և ոչ մեկը Բունդեստագի կողմից հաշվի չեն առնվել»:¹⁰⁴ Պատրամենտի խոսնակ Բյուլենտ Առինչը նամակ հղեց իր գերմանացի պաշտոնակցին՝ նշելով որ ինքը վշտացած է «բարեկամ և դաշնակից պետության պատրամենտի այդ միակողմանի որոշմամբ»:¹⁰⁵ Բայց այս ամենը որևէ արդյունք չտվեց: Գերմանիայի Կանաչների կուսակցության անդամ Ջեմ Օզդեմիրը, որը թուրքական ծագում ունեցող ամենաակնառու գերմանացի քաղաքական գործիչն է, պարզապես նշեց, որ «միջազգային քննարկումներում դուք չեք կարող շարունակել այդքան երկար ժամանակ փակ հասարակության մեջ գործող պետական քարոզչությունը»:¹⁰⁶

Անգամ ԱՄՆ-ում, որտեղ որոշ թուրքեր կարծում են, որ ճանաչման խաղում հաղթանակը իրենցն է լինելու, Անկարայի ցեղասպանության դիվանագիտության տապալումն ավելի քան ակնհայտ է: ԱՄՆ նախագահ Ռեյգանը 1981թ. ելույթում ակնարկ արել է «Հայոց ցեղասպանությանը»:¹⁰⁷ Ավագ Ջորջ Բուշը խոսել է «1915-1923

[reconciliation between Turks and Armenians](#)”, 15 June 2005

¹⁰² նույն տեղում

¹⁰³ German Bundestag, [Motion by the CDU/CSU group](#), 18 February 2005

¹⁰⁴ *Handelsblatt*, “[Spannungen zwischen der Türkei und Deutschland](#)” [Լարվածությունը Գերմանիայի և Թուրքիայի միջև], 17 մայիս 2005

¹⁰⁵ *Stern*, “[Unfreundliche Töne vor der Kanzler-Visite](#)” [Ոչ բարեկամական ձայներ նախքան կանցլերի այցը], 3

May 2005. TGNA Announcements “[Arinc “Türkiye tarihiyle her zaman yüzlesmeye hazirdir ve tarihimizde utanacagimiz hicbir sayfa bulunmamaktadır](#)” (Առինչ. Թուրքիան միշտ պատրաստ է նայելու իր պատմությանը և մեր պատմության մեջ այդպիսի էջ չկա, որից մենք ամաչենք), 22 հունիս 2005.

¹⁰⁶ Jörg Lau, “[Deutsche Schmerztherapie](#)” [գերմանական ցավի թերապիան], *DIE ZEIT*, 21 ապրիլ 2005

¹⁰⁷ Ronald Reagan, “[Proclamation 4838 – Days of Remembrance of Victims of the Holocaust](#)”, 22 April 1981

թթ. Օսմանյան ղեկավարության ձեռքից հայերի սարսափելի կոտորածների մասին»:¹⁰⁸ Մինչ օրս ամերիկյան բնակչության 85% ը ներկայացնող 42 ԱՄՆ նահանգներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը՝ օրենսդրորեն կամ հայտարարության տեսքով:¹⁰⁹

Թուրքիան ահռելի քաղաքական կապիտալ է ծախսել ԱՄՆ Կոնգրեսում ցեղասպանության վերաբերյալ օրինագծի անցկացումը ձախողելու համար: 2007թ. սեպտեմբերին, երբ Համայնքների պալատը պատրաստ էր Հայոց ցեղասպանությունը դատապարտող չպարտավորեցնող բանաձև ընդունել, Թուրքիան ետ կանչեց իր դեսպանին: 2008թ. Թուրքիայի նախագգուշացումները ևս կանխեցին Կոնգրեսում ցեղասպանության օրինագծի անցկացումը: Ինչպես թուրք վերլուծաբան Օմեր Թասպինարն է նշել, դա «այլուտոյան հաղթանակ էր»: Նա նշում է, որ ցեղասպանության բանաձևի ընդունման ձախողումը «որևէ կապ չունեի պատմության թուրքական տարբերակի ճշմարտացիությունն ապացուցող նոր պատմական փաստաթղթերի հանկարծակի բացահայտումով» և ամեն կերպ կապված էր գուտ ռազմավարական հետաքրքրությունների, այսինքն իրաքյան պատերազմում թուրքական օգնությունից և ռեսուրսներից ԱՄՆ կախվածության հետ: Ազդեցիկ մեկնաբան Չարլզ Կրաութամերը, որը Թուրքիայի կողմում էր ցեղասպանության բանաձևին դիմակայելու գործընթացում, այդ ժամանակ ևս գրեց, որ «1915թ սկսած մեկից մեկուկես միլիոն հայեր դաժանաբար և հետևողականորեն կոտորվել են միտումնավոր ցեղասպան գործողության արշավում, որը հստակ պատմականորեն արձանագրված փաստ է»:¹¹⁰ Եթե ամփոփենք, պետք է նշել, որ Թուրքիային չի հաջողվել պատմության իր տարբերակը համոզել անգամ իր սերտ դաշնակիցներին: Ինչպես Թասպինարն է եզրահանգում, «Թուրքիան կարևոր հաղթանակ տարավ ճակատամարտում, բայց պարտվեց պատերազմում»:¹¹¹

ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից հետո նոր վարչակազմում բոլոր կարևորագույն պաշտոնյաները՝ ինքը նախագահ Բարաք Օբաման, փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը, պետքարտուղար Հիլարի Բլինթոնը և Ներկայացուցիչների Պալատի խոսնակ Նենսի Փելոզին, ըստ արձանագրության, 1915թ. անվանել են

¹⁰⁸ George Bush senior in April 1990. Quoted in Torben Jorgensen, “Turkey, the US and the Armenian Genocide”, in Steven Jensen (ed.), *Genocide. Cases, Comparisons, and Contemporary Debates*, էջ 218

¹⁰⁹ Այն ութ նահանգները, որոնք դեռ չեն ընդունել ցեղասպանությունը Տեխաս, Նյու Յորք, Կոնեկտիկուտ, Վիրջինիա, Արևմտ. Վիրջինիա, Այովա, Ալաբամա, Միսսիսիպի, Ինդիանա:

¹¹⁰ Charles Krauthammer, “The Razor Is Out”, *National Review*, 17 October 2007.

¹¹¹ Omer Taspinar, “The coming storm with Washington”, *Today's Zaman*, 15 December 2008

ցեղասպանություն:¹¹² «Դժոխքից եկած խնդիր» գրքի հեղինակ Սամանթա Փաուերը արտաքին հարաբերությունների գծով կարևոր խորհրդական է և Ազգային Անվտանգության Խորհրդի անդամ: Օբամայի նախընտրական արշավի համացանցային կայքում նշված է, որ

«Հայոց ցեղասպանությունը պնդում, անձնական տեսակետ կամ կարծիք չէ, այլ լայնորեն փաստագրված փաստ՝ պատմական բազմաթիվ վկայությունների աջակցությամբ»:¹¹³

Օբաման իր նախընտրական արշավի ժամանակ հայտարարել է. «Որպես սենատոր ես հաստատուն կերպով աջակցում եմ Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունմանը և որպես նախագահ ես կճանաչեմ Հայոց ցեղասպանությունը»:¹¹⁴ 2009թ. ապրիլին Անկարա կատարած այցի ընթացքում, որը ԱՄՆ-Թուրքիայի հարաբերություններում նոր դարաշրջանի սկիզբը պետք է դնեք, Օբաման լրագրողներին ասաց, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր տեսակետները «չեն փոխվել և արձանագրված են»:¹¹⁵ Թուրքիա կատարած այցի ընթացքում Օբամայի կողմից «ցեղասպանություն» բառի չօգտագործումը առանց իր հյուրերին վիրավորելու սեփական համոզմունքները պաշտպանելուն ուղղված քաղաքավարի և ողջամիտ ձև էր: Այնուամենայնիվ, թվում է, որ ժամանակի խնդիր է մինչև որ Օբաման և նրա վարչակազմի այլ ներկայացուցիչներ կվերահաստատեն այն, ինչ նրանք շարունակաբար հայտարարել են:

Ե. Ճանաչման հետևանքները

2004թ. Օգոստոսին Գերմանիայի արտաքին օգնության նախարար Հեդմարի Վիցգորեկ Ջեուլը մասնակցեց Նամիբիայի Օկակարարա բնակավայրում անցկացված միջոցառմանը: Նա եկել էր պաշտոնապես ներողություն խնդրելու այն բանի համար, ինչը պատմաբաններն անվանում են 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, որն իրականացվել էր գերմանական գաղութարար զորքերի կողմից 1904թ. հերերոների ապստամբության ժամանակ:

¹¹² Armenian National Committee of America, “[Hillary Clinton supports adoption of Armenian Genocide Resolution; Pledges to recognize Armenian Genocide as President](#)”, 24 January 2008

¹¹³ *Armenians for Obama*, “[Barack Obama Supporting US-Armenia relations](#)”

¹¹⁴ Obama News and Speeches, “[On the importance of US-Armenian relations](#)”, 19 January 2008

¹¹⁵ Al Jazeera, “Obama 'US not at war with Islam'“, 7 April 2009, <http://english.aljazeera.net/news/europe/2009/04/20094611538303268.html>

«Մենք, գերմանացիներս ընդունում ենք մեր պատմական և բարոյական պատասխանատվությունը և գերմանացիների կողմից այդ ժամանակ կատարած մեղքը... Այդ ժամանակ կատարված վայրագությունները կանվանվեին ցեղասպանություն»:¹¹⁶

Շուրջ 130 գերմանացի զինվորների և գաղութաբնակների մահվան պատճառ դարձած հերերոների ապստամբությանն ի պատասխան գաղութարար զորքերը Լոթար ֆոն Թրոթայի գլխավորությամբ կարգադրեցին հերերոներին կամ հեռանալ Նամիբիայից կամ սպանվել: Տղամարդիկ, կանայք և երեխաները կամ կոտորվեցին, կամ տեղափոխվեցին անապատ և թողնվեցին այնտեղ՝ մեռնելու: Շուրջ 100.000 մարդկանցից միայն 15.000-ը ողջ մնաց: 2001թ. Հերերոները 4 միլիարդ ԱՄՆ դոլարի դատական հայց հարուցեցին գերմանական կառավարության և ԱՄՆ-ում գործող երկու գերմանական ընկերությունների դեմ: Գերմանական կառավարությունն ընդդիմացավ այդ պնդումներին՝ նշելով, որ զինվորներին և քաղաքացիական բնակչությանը պաշտպանող միջազգային հումանիտար օրենքները հակամարտության պահին գոյություն չունեին:¹¹⁷ Երբ դեպքերից ուղիղ 100 տարի անց գերմանական ներողությունն ստացվեց, դատական քննարկումները դադարեցվեցին:

Թուրքերը երկար ժամանակ պնդում են, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեպքում թուրքերը կանվանվեն «ցեղասպան ժողովուրդ»՝ հայտնվելով ֆաշիստական Գերմանիայի հետ նույն բարոյական հարթությունում: Սակայն միջազգային մտածողության մեջ առկա այն նույն մղումները, որոնք հանգեցրին Հայոց ցեղասպանության լայն ճանաչմանը, նաև այդ ցեղասպանությունը պակաս եզակի դրվագ դարձրին մի քանի տասնամյակ առաջ առկա պատկերացումների համեմատ:

Թուրքամետ պատմաբան Ջաստին Մակքարտին մեկ անգամ Ստամբուլի լսարաններից մեկում բավականաչափ թեթևամտորեն հայտարարել է, որ ՄԱԿ-ի ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի չափանիշերի համաձայն «Թուրքերն իրոք մեղավոր են ցեղասպանության համար» և «մեղավոր են նաև հայերը, ռուսները, հույները, ամերիկացիները, բրիտանացիները և երբևէ գոյություն ունեցած գրեթե ցանկացած ժողովուրդ»:¹¹⁸

Թեև նրա նկատառումների նպատակը ցեղասպանության կոնվենցիան ծաղրելն էր, իրականում այն մատնանշում էր բավականին խոր ճշմարտություն, որ աշխարհում բավականաչափ ցեղասպանություններ են տեղի ունեցել, որոնք առնչվում են ինչպես արևմտյան, այնպես էլ զարգացող աշխարհին:

¹¹⁶ Andrew Meldrum, “German minister says sorry for genocide in Namibia”, *The Guardian*, 16 August 2004.

¹¹⁷ *Նույն տեղում.*

¹¹⁸ Presentation made by Prof. Justin McCarthy (Seminar on Turkish-Armenian Relations Organized by the Democratic Principles Association 15 March 2001 /Istanbul).

Այնուամենայնիվ, նախքան 1948թ. կոնվենցիան իրականացված ցեղասպանությունների ճանաչումը մեծամասամբ սիմվոլիկ գործողություն է եղել, առանց որևէ դառը հետևանքների, որոնցից վախենում են թուրքերը: Հայոց ցեղասպանության վերաբերյալ 2000թ. ի վեր ավելացող բանաձևերը քիչ բան են արել Թուրքիայի միջազգային հեղինակությանը վնասելու տեսանկյունից: Այդ նույն ժամանակահատվածում սկսվել են Եվրամիությանն անդամակցության խնդրով բանակցությունները, Թուրքիան դարձել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներից մեկը (առաջին անգամ 1960-ական թվականներից ի վեր), օտարերկյա ներդրումներն զգալի աճ են արձանագրել և միջազգային լայն շրջանակները գովեստով են արտահայտվել Թուրքիայի ներքին կյանքում իրականացվող բարեփոխումների և արտաքին նախաձեռնությունների վերաբերյալ: 2009թ. ապրիլին Բարաք Օբամայի այցելությունը միջազգային բեմահարթակում Թուրքիայի բարձրացող աստղի ևս մեկ վկայությունն է:

Ցեղասպանության վերաբերյալ բանաձևերում որևէ կապ չկա ցեղասպանության ճանաչման և փոխհատուցումների կամ տարածքային զիջումների միջև: Փաստացի, ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը թուրքական պետության համար որևէ նյութական հետևանքներ չի առաջացրել: 1987թ. հունիսին ընդունված Եվրախորհրդարանի բանաձևը հստակ հայտարարում էր, որ մինչ «Օսմանյան Կայսրության տարածքում բնակվող հայերին վերաբերող 1915-1917թթ. ողբերգական իրադարձությունները ցեղասպանություն են Ներկայիս Թուրքիան չի կարող պատասխանատու համարվել Օսմանյան Կայսրության հայերի վերապրած ողբերգության համար»:¹¹⁹ 2002թ. թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը ջանում էր ստանալ Նյու Յորքի ազդեցիկ Անցումային արդարադատության միջազգային դատարանի կարծիքը ցեղասպանության իրավական պատասխանատվության խնդրի վերաբերյալ: Անկախ խորհրդի կողմից կազմված կարծիքը հայտարարում էր.

«Ցեղասպանության կոնվենցիան չի պարունակում որևէ դրույթ, որը վերաբերում է նրա հետահայաց կիրառմանը: Հակառակը, կոնվենցիայի տեքստը հստակ առաջարկում է, որ նրա նպատակն է հետագա պարտավորություններ դնել կոնվենցիան ստորագրած պետությունների վրա: Հետևաբար, որևէ իրավական, ֆինանսական կամ տարածքային պահանջներ, որոնք բխում են {1915թ} դեպքերից, չեն կարող կոնվենցիայի հիման վրա ներկայացվել որևէ անհատի կամ պետության»:¹²⁰

¹¹⁹ *European Parliament, "Resolution on a Political solution to the Armenian Question"*, Doc. A2-33/87, Official Journal of the European Communities, No. C 190/119.

¹²⁰ See <http://www.american.edu/cgp/track2/data/ICTJreportEnglish.pdf>, էջ. 4. Մեկ այլ տեղ Անցումային արդարադատության միջազգային դատարանի զեկույցը եզրակացնում է, որ "Դեպքերը" "իրականում ներառում էին ցեղասպանության հանցանքի բոլոր տարրերը, ինչպես որ այն սահմանված է

Միջազգային իրավունքի և ցեղապանազիտության առաջատար գիտնականներից Վիլյամ Շաբասը նույնպես գրում է.

«Ոչ ոք, բացի Թուրքիայից, չի կարող դիմել Արդարության միջազգային դատարանին միջազգային իրավունքի հիման վրա հայերի ցեղասպանության համար փոխհատուցման պահանջով, մի բան, որ Թուրքիան հազիվ թե անի»:¹²¹

ԱՄՆ Կոնգրեսում քննարկվող չպարտավորեցնող բանաձևերը որը թուրք քաղաքական գործիչները համարում են իրենց գլխին կախված Դամոկլյան սուր, չի փոխի այս իրավիճակը: Ոչ էլ այն կփոխի նախագահ Օբամայի հայտարարությունը:

Սա Թուրքիայի ցեղասպանության վերաբերյալ քաղաքականության պարադոքսն է: Գնալով ավելու աւ ավելի շատ թուրքեր են հասկանում, որ Հայկական հարցում իրենց դիրքորոշումը միայն լարվածություն է առաջ բերում կարևոր դաշնակիցների հետ՝ սակայն լիովին ձախողվում է նրանց համոզելու խնդրում: Մինևույն ժամանակ, աղոտ բայց ուժեղ անհանգստություն է առկա պաշտոնական դիրքորոշման մեջ որևէ փոփոխության բերած հետևանքների առնչությամբ: Քանի դեռ Թուրքիայի քաղաքական ղեկավարները և հանրային կարծիք ձևավորողները շարունակում են վառ պահել տարածքային կորուստների և փոխհատուցման վախը, Թուրքիան շարունակում է պաշտպանվել: Ցեղասպանություն բառի ցանկացած հիշատակում որպես ազգային արժանապատվության դեմ ուղղված հարձակում դիտարկելով՝ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը դարձել է իր վերահսկողությունից դուրս գտնվող իրադարձությունների պատանդը՝ հատկապես Կովկասին առնչվող խնդիրներում: Այժմ ակնհայտ է, որ մասնավորապես, այս քաղաքականությունը դարձել է ազգային պատասխանատվություն:

IV. Մեծ Հայաստանի խամրող երազը

Կիրո Մանոյանի Երևանի գրասենյակի համակարգչի էկրանի նկարը ներկայացնում է պատմության մի մասը: Այն պատկերում է Խարբերդը՝ Մանոյանի տատիկի և պապիկի նախկին հայրենի քաղաքը, հարավարևելյան Անատոլիայի մի մաս, որը 1915թ. հայտնի դարձավ որպես «Կոտորածի նահանգ»: 1915թ. սկզբին տարածաշրջանում շուրջ 100.000 հայ էր բնակվում: 1915թ. դեկտեմբերի 30-ին, Խարբերդում ԱՄՆ հյուպատոսը հաղորդեց «հավանաբար, չորս հազարից ավելի

Կոնվենցիայում, և պատմաբանները, քաղաքական գործիչները, լրագրողները և այլն արդարաձված կլինեն շարունակելով այդ դեպքերը այդպես բնութագրել»:

¹²¹ William A. Schabas, *Genocide in international law: the crimes of crimes*, Cambridge, 2000, p. 443

մարդ չի մնացել»։ Այս ժամակահատվածում այստեղ իշխում էր ահաբեկչությունը, որը մանրամասն նկարագրել է ամերիկացի պատմաբան Գյունտեր Լեվինը։

«Մի քանի հարյուր հայ տղամարդիկ ձերբակալվեցին, կարևորություն ներկայացնող համարյա բոլոր անձինք։ Գրեթե բոլորին կտտանքների ենթարկեցին՝ գաղտնի զենքերը և ապստամբական դավադրությունները բացահայտելու համար... Հուլիսի սկզբին իշխանություններն սկսեցին դատարկել բանտերը։ Տղամարդկանց խմբերը գիշերով դուրս էին տարվում, և նրանց մասին այլևս ոչինչ չէր լսվում։ Շուտով հայտնի դարձավ, որ նրանք բոլորը սպանվել են»։¹²²

Մանոյանի տատիկին և պապիկին հաջողվել էր փախչել՝ ապաստան գտնելով թուրք ընկերների մոտ (չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակ հայերին ապաստան տալը լուրջ հանցագործություն էր համարվում)։

Կիրոն ծնվել է Լիբանանում, տեղահանությունները վերապրած մեծ թվով օսմանյան հայերի հայրենիքում։ Լիբանանի հայ համայնքը, ինչպես աշխարհի շատ այլ հայ համայնքներ «փախստական կոտրված բնակչություն էր՝ քաղաքական գիտակցության ցածր մակարդակով կամ դրա բացակայությամբ, կրոնական և տարածաշրջանային ուժեղ ինքնագիտակցությամբ, ազգային պատկանելիության թույլ զգացումով և հայերեն լեզվի սահմանափակ իմացությամբ, կամ նույնիսկ դրա բացակայությամբ»։¹²³

Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը, որն արդեն բավականաչափ բնեռացված էր, էլ ավելի վատթարացավ Հայ առաքելական եկեղեցու ներսում առկա բաժանումներով։ Սառը պատերազմի ընթացքում Լիբանանում հիմնադրված Կիլիկիայի աթոռը, որը աջակցում էր դաշնակցականների գործին, կատաղի հակախորհրդային դիրքորոշում էր որդեգրել։ Էջմիածնի աթոռը (Հայաստանում), որին սատարում էին սփյուռքի այլ կուսակցություններ, աջակցում էր խորհրդային իշխանություններին։ 1958թ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում հայ համայնքը բաժանվեց երկու մասի, որոնցից յուրաքանչյուրն աջակցում էր տարբեր կողմերի։

1965թ. ապրիլի 24-ին, 1915թ. կոտորածների 50-ամյա տարելիցի օրը, 200.000 հայ հավաքվել էր Երևանի Օպերայի թատրոնի շենքի դիմաց։ Բողոքի մասնակիցները քարեր նետելով և «արդարություն», ու «մեր հողերը» վանկարկելով՝ պահանջում էին, որ Թուրքիան վերադարձնի այն բոլոր տարածքները, որտեղ հայերը սովոր էին բնակվել, և կոչ էին անում խորհրդային իշխանություններին օգնել այդ հարցում։ Երկու տարի անց ավարտվեց Երևանում Հայոց ցեղասպանության հուշակոթողի

¹²² Guenther Lewy, *The Armenian massacres in Ottoman Turkey – A Disputed Genocide*, 2005, p. 169.

¹²³ Razmik Panossian, *The Armenians – from Kings and Priests to Merchants and Commissars*, 2006, p. 294.

կառուցումը, որտեղ ներկայացված է ներկայումս Թուրքիայի սահմաններում գտնվող ժամանակին հայերով բնակեցված քաղաքների ցուցակը:

1965թ. տարելիցը նաև շրջադարձային կետ էր հայ հսկայական սփյուռքի համար: Հայ հեղափոխական դաշնակցության առաջնորդների նոր խումբը սկսեց օգտագործել հակաթուրքական զգացմունքները հայկական միասնության և հայրենասիրության հարթակ ձևավորելու համար: Արդարության, փոխհատուցման և ռեստիտուցիայի կոչերը մոբիլիզացնում էին ցրված համայնքները ավելի, քան երբևէ եղել էր նախկինում: Յեղասպանությունը և նրա ճանաչմանն ուղղված արշավը կենտրոնական տեղ սկսեց զբաղեցնել հայկական ազգային գիտակցության մեջ: Ինչպես նշում է Ռազմիկ Փանոսյանը.

«Յեղասպանությունը (և վերջինիս հերքումը) դարձել է ժամանակակից հայ ինքնագիտակցության որոշիչ և հիմնական գործոնը: 1915թ. հետո ապրող հայերը, հատկապես սփյուռքում, իրենց ընկալում են որպես «առաջին քրիստոնյա ազգ» և «20-րդ դարում ցեղասպանության առաջին զոհ»:¹²⁴

Թուրքիայի հանդեպ ընդդիմության աճին զուգահեռ թուրքական սահմանի վերանայման միջոցով պատմական Հայաստանի միավորման պահանջը դուրս մղեց խորհրդային իշխանությունից ազատագրվելու նպատակը: Սփյուռքի քաղաքական կուսակցություններն ավելի ու ավելի շատ սկսեցին մի կողմ դնել իրենց տարածայնությունները՝ Թուրքիայի նկատմամբ միասնական դիրքորոշում որդեգրելու համար:¹²⁵

1975թ. սփյուռքի երեք հիմնական կուսակցությունների կողմից ՄԱԿ-ին ներկայացված հուշագիրը պահանջում էր «Իրենց օրինական տիրոջը վերադարձնել Թուրքիայի ձեռքում գտնվող հայկական հողերը՝ հայ ժողովրդին բարոյական, ֆինանսական և տարածքային փոխհատուցումներին զուգահեռ»:

Շատ հայերի պես Կիրո Մանոյանը և նրա ընտանիքը լքեց Լիբանանը քաղաքացիական պատերազմի ժամանակ և արտագաղթեց Կանադա՝ որտեղ նա ակտիվ դեր ստանձնեց ՀՅԴ կառույցում, որն այժմ ակտիվացել էր ընդհանուր խնդրի շուրջ: 2000թ. նա եկավ Հայաստան և դարձավ ՀՅԴ արտաքին քաղաքականության խոսնակը: Մինչ օրս Մանոյանը շարունակում է մերժել Թուրքիայի հետ առկա սահմանը: 2005թ. ապրիլին «Երկիր» թերթին տված հարցազրույցում Մանոյանը բացատրում է, որ Հայաստանն իր շատ ավելի հզոր հարևանի հետ տարածքային վեճի

¹²⁴ Razmik Panossian, p. 242.

¹²⁵ ՄԴՀԿ, Սոցիալ դեմոկրատ Հնչակյան կուսակցություն, ՄԴՀԿ, հիմնվել է 1887 ժնևում Հայկական ժողովրդավարական Ազատական Կուսակցություն, ռամկավար-հիմնվել 1908 թ. Եգիպտոսում; ՀՅԴ- հիմնվել է 1890 Թիֆլիսում:

խնդիրը կներկայացնի այն ժամանակ, հենց որ նման քայլի հնարավորություն ստեղծվի:

«Մենք գտնում ենք, որ Հայաստանն այսօր ի վիճակի չէ նման պահանջներ ներկայացնել: Բայց սա չի նշանակում, որ այն ի վիճակի չի լինի նման բան անել վաղը: Հետևաբար, նա չպետք է կատարի այնպիսի քայլեր, որոնք կարող են խոչընդոտել կամ գսպել մեզ վաղը»:¹²⁶

Սա մնում է որպես ՀՅԴ պաշտոնական դիրքորոշում: 2007թ. Երևանում կայացած խորհրդարանական քննարկումների ընթացքում, այդ ժամանակ խորհրդարանի փոխխոսնակ, ՀՅԴ ղեկավար գործիչ Վահան Հովհաննիսյանն «ապօրինի» որակեց ներկայիս սահմանը որոշած 1921թ. Կարսի և Մոսկվայի պայմանագրերը և կոչ արեց «չափանաց լուրջ դիվանագիտական և իրավական» աշխատանք կատարել դրանք վերանայելու համար: Ելույթ ունենալով նույն քննարկումների ժամանակ՝ Կանադայում ՀՀ նախկին դեսպան Արա Պապյանը նույնպես մերժեց երկու պայմանագրերի օրինականությունը՝ պնդելով, որ ուժի մեջ շարունակում է մնալ 1920թ. կնքված (բայց երբեք չվավերացված) Սևրի պայմանագիրը, որը Հայաստանին էր շնորհում Արևելյան Անատոլիայի մի զգալի մասը:¹²⁷ Պապյանը նույնիսկ հաշվարկել էր ճշգրիտ թիվը՝ ԱՄՆ 41.514.230.940 դոլար, որը Թուրքիան պետք է վճարի որպես փոխհատուցում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պատճառած վնասների համար:¹²⁸

Մանոյանի և Պապյանի նման մտածող հայերի համաձայն, չկարգավորված տարածքային վեճը անհաղթահարելի խոչընդոտ է երկու հարևան երկրների միջև նորմալ հարաբերությունների ճանապարհին: Արմեն Այվազյանը, Երևանում գործող «Արարատ» ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրենը, իր հերթին պնդում է, որ Հայաստանը, եթե այն լուրջ է տարածքային պահանջները հետապնդելու խնդրում՝ ընդհանրապես չպետ է հարաբերվի Թուրքիայի հետ:

«Հայկական հարցի լուծումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը չէ, ինչպես շատերը սխալ կերպով ընկալում են, և ինչպես առաջարկում են Հայաստանի կեղծ բարեկամները: Հայկական հարցը նախ և առաջ տարածքային հարց է... կա Հայկական հարցի միայն մեկ լուծում. վերականգնել հայկական պետությունը, եթե ոչ Հայաստանի ողջ տարածքում (350.000 քառակուսի կմ.) ապա

¹²⁶ <http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/04/7f7e75bf-dac4-42a0-9931-0803a9415cf2.asp>.

¹²⁷ 2007 թ. նա հրատարակեց «Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները: հողավաճների ժողովածու» գիրքը հայերեն լեզվով, որտեղ նա առաջադրում է իր լուծումները:

¹²⁸ Azg Daily, April 24, 2007.

գոնե նրա մի զգալի հատվածում, այնպիսին, որը կապահովի հայկական քաղաքակրթության ապահով և երկարաժամկետ գոյությունն ու զարգացումը»:¹²⁹

Այվազյանը ներկայիս Հայաստանը (29.800 քառակուսի կմ.) նմանեցնում է «միայնակ ամրոցի», որը որևէ տարածք չի առաջարկում ազգին՝ նահանջելու և ուժերը վերախմբավորելու համար: Սա երբեք չի կարող ընդունվել:¹³⁰ Այվազյանը նաև խստորեն քննադատում է Հայաստանի իշխանություններին՝ Թուրքիայի նկատմամբ չափազանց փափուկ լինելու համար, մասնավորապես, նախագահ Գյուլի 2008թ. Երևան կատարած այցելության լույսի ներքո:

«Մինչ Իսրայելը հակադարձում է Հոլոքոստը ժխտող Իրանին հնարավոր բոլոր միջոցներով, Հայաստանի կառավարությունը Հայոց ցեղասպանությունը ժխտող Աբդուլա Գյուլին հրավիրում է Հայաստան և կոչ է անում մեր ժողովրդին հարգել թշնամու դրոշը և օրհներգը»:¹³¹

Այվազյանի մաքսիմալիստական հայացքները դեռևս բավական հաճախ են հանդիպում հայերի շրջանում, ինչպես Հայաստանում, այնպես էլ դրսում: Սակայն որպես քաղաքական հարթակի մաս, նրանք ավելի ու ավելի սնանկ են դառնում՝ չառաջարկելով որևէ արդյունավետ ռազմավարություն և իրատեսական հեռանկար Հայաստանի տարածքային պահանջներն առաջ մղելու համար: Ինչն ավելի կարևոր է, դրանք դադարել են արդյունավետ գործիք լինել հայերին միավորելու խնդրում ինչպես երկրի ներսում, այնպես էլ սփյուռքում:

Հայաստանի ներսում ՀՅԴ-ն երբեք ի վիճակի չի եղել 14 տոկոսից ավելի շատ ձայն հավաքել: Ներկայիս կոալիցիոն կառավարությունում ՀՅԴ-ն կրտսեր գործընկեր է, և նրա ազդեցությունը արտաքին քաղաքականության վրա սահմանափակ է:

Փաստացի, անկախությունից ի վեր բոլոր հայկական կառավարությունները կողմ են եղել առանց որևէ նախապայմանների Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը:

Նույնիսկ սփյուռքում դիրքորոշումները բաժանված են: Մինչ որոշ հայեր ընդդիմանում են թուրքերի հետ որևէ շփմանը, քանի դեռ Թուրքիան չի ճանաչել ցեղասպանության փաստը, չի վճարել փոխհատուցումներ և չի վերադարձրել «Արևմտայն Հայաստանի» տարածքը, մյուսները բաց են շփումների համար: Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն (ANCA), ցանց, որը կապված է ՀՅԴ-ի հետ,

¹²⁹ Armen Ayvazian, “The Unimplemented consequences of the Sevres Treaty for the Middle Eastern and international politics”, Yerkir, 13, January, 2006.

¹³⁰ Armen Ayvazian, “Western Armenia vs. Eastern Anatolia”, *Europe and Orient*, no. 4.

¹³¹ Armen Ayvazina, “The number of the Turkish scores on the diplomatic goal of Armenia may increase”.

ԱՄՆ պետդեպարտամենտի՝ նշանավոր հայերին և թուրքերին ի մի բերելու 2001թ. փորձի արդյունք թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովին վերաբերում էր որպես «թուրքական խորանամկություն, որի նպատակն է ձախողել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը» և «որպես արգելք ցեղասպանության ճանաչմանն ուղղված արշավին»¹³²: Մյուս կողմից Ամերիկայի հայկական համագումարը մասնակցեց հանձնաժողովի աշխատանքներին:

Միննույն ժամանակ, ցեղասպանության միջազգային ճանաչումը չվերածվեց սահմանների փոփոխմանն ուղղված միջազգային աջակցության, ինչը ՀՅԴ գլխավոր նպատակներից մեկն է: Երբորդ երկրների բանաձևերը և հայտարարությունները, ընդունում է սփյուռքահայ պատմաբան Միմոն Փայասյանը. «արհամարհում են փոխհատուցման և ռեստիտուցիայի խնդիրները, և մասնավորապես, նրանք արհամարհում են այն փաստը, որ ցեղասպանության հետևանքով հայերը կորցրել են իրենց պատմական տարածքները»:¹³³ Որպես հետևանք, կոշտ գծի կողմնակից հայերը կասկածի տակ են դնում ցեղասպանության ճանաչման համար այդքան ուժգնորեն պայքարելու օգտակարությունը: Ինչպես նշում է Արա Պասյանը. «Մեր բոլոր ռեսուրսները գնում են ցեղասպանությանը: Իհարկե, դա չափազանց ակնհայտ է, եթե մարդիկ կոտորվել են իրենց էթնիկական պատկանելիության համար, դա ցեղասպանություն է: Անիմաստ է վիճել, թե արդյո՞ք նման բան տեղի ունեցել է, թե ոչ»:

Հայ ազգայնականների «կոպիտ և անկանոն» տեսակետը, գրում է առաջատար ամերիկահայ մտավորական և Հայաստանի նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի խորհրդական ժիրայր Լիպարիտյանը, «մեղադրում է անցյալի և ներկայի բոլոր թուրքերին քրեական գործողությունների մասնակից լինելու մեջ: Դա բոլոր հայերի ճակատամարտ էր բոլոր թուրքերի դեմ, կամ թվում էր այդպիսին: Ցեղասպանության ժխտման քաղաքականությունը դիտարկվում է որպես սոսկ Թուրքիայի և թուրքերի չար բնության արտահայտություն»:¹³⁴

Ցեղասպանության ճանաչումը կապելով տարածքային պահանջների հետ՝ ազգայնական տեսակետն ապացուցել է իր ոչ կառուցողական բնույթը.

«Հայ քաղաքական կուսակցությունները Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը համարում են առաջին քայլ և իրավական հիմք Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելու համար: Նույնիսկ եթե չլինեք որևէ այլ

¹³² David Philips, *Unsilencing the past*, p. 83

¹³³ Simon Payaslian, “After Recognition”, *The Armenian Forum*, Vol. 2, No.3, (The Gomidas Institute, Princeton University), Winter 1999, p.49.

¹³⁴ Gerard Libaridian, *Modern Armenia*, p. 191.

պատճառ, այս կապը բավարար կլինէր թուրքական պետության համար, որպէսզի այն ցանկացած գնով հերքէր ցեղասպանության փաստը»:¹³⁵

Միանշանակ պնդելով, որ «որևէ տրամաբանական կապ գոյություն չունի ցեղասպանության ճանաչման խնդրի և Թուրքիայից հող ստանալու միջև»՝ պատմաբան Դոնալդ Բլոքսամը նույնպէս մարտահրավեր է նետում հայ ազգայնականներին՝ պատասխանելու հետևյալ հիմնարար հարցին «արդյո՞ք ճանաչումը իրոք դուր է բացում վերքերի բուժման և հաշտեցման համար, ինչպէս մեզ հաճախակի ասում են, թե դա ազգային դժգոհությունները փոխհատուցելու միջոց է: Դա պատմական ճշմարտության, բարոյականության և պատասխանատվության, թե՞ չլուծված քաղաքական և նյութական պահանջների խնդիր է»:¹³⁶

V. Թնավոր թոշուններ

2007թ. դեկտեմբերին 1991-1998թթ. Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Երևանի ազատության հրապարակում հիմնական քաղաքական էլոյթ ունեցավ, որպէս իր նախագահական քարոզարշավի մաս: Հիշեցնելով լսարանին իր սեփական պատմությունը. «Ես ցեղասպանությունը վերապրածների ժառանգ եմ: Իմ պապը մասնակցել է Մուսա լեռան հերոսական ճակատամարտին: Իմ յոթամյա հայրը դիրքեր սնունդ և ջուր է մատակարարել: Իմ մայրը ծնվել է քարանձավում այդ օրերին: Եթե ֆրանսիական նավատորմը չանցներ Մուսա Լեռան ավերով, ես այժմ կենդանի չէի լինի»՝ նա առաջ քաշեց Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու խնդիրը.

«Ժամանակն է վերջնականապէս ըմբռնելու, որ Թուրքիային վերջնագրեր ներկայացնելով կամ նրան անկյուն քշելով՝ ոչ ոք չի կարող ստիպել նրան ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ես ոչ մի կասկած չունեմ, որ Թուրքիան վաղ թե ուշ, դա անելու է: Սակայն դա տեղի չի ունենա նախքան հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը, այլ մեր երկրների միջև բարիդրացիության, համագործակցության և վստահության մթնոլորտի ստեղծումից հետո: Հետևաբար, հույզերը մի կողմ թողած, այդ հարաբերությունները պետք է կառուցվեն՝ հենվելով այն իրականության վրա, որ Հայաստանը 1915թ. դեպքերը համարում է ցեղասպանություն, իսկ Թուրքիան՝ ոչ»:

Տեր-Պետրոսյանը չի առարկում սփյուռքի հայերին, ովքեր աշխատում են հասնել ցեղասպանության ճանաչմանը: Ինչպէս նա նշում է. «Հայ սփյուռքի որդիները և դուստրերը, որպէս տարբեր երկրների քաղաքացիներ, հարկատուներ և

¹³⁵ Ibid.

¹³⁶ Donald Bloxham, *The Great Game of Genocide. Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*, 2007, p. 232.

քվեարկողներ, իրավունք ունեն ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա»: Հայաստանի շահը, սակայն, արտերկրում Թուրքիայի դեմ լոբբիստական գործողություններ իրականացնելը չէ, այլ տեսնել Թուրքիայի հաջողությունը բարգավաճ եվրոպական ժողովրդավարություն դառնալու գործում: Հայաստանի իշխանությունների փորձերը՝ խոչընդոտել Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացին, «ոչ կոմպետենտ լինելու» նշան են:

«Ակնհայտ է, որ բոլոր առումներով՝ տնտեսական, քաղաքական և անվտանգության, Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությունը բխում է Հայաստանի շահերից: Ի՞նչն է ավելի վտանգավոր՝ Եվրամիության անդամ Թուրքիան, թե Արևմուտքից մերժված Թուրքիան, որը շրջվել է դեպի Արևելք: Կամ ի՞նչն է ավելի նախընտրելի՝ Արևմուտքից մեկուսացված Հայաստան, թե Եվրամիությանը սահմանակից Հայաստան: Մեր արտաքին քաղաքականությունը պետք է վաղուց պատասխաններ այս պարզ հարցերին»:¹³⁷

Դեռևս նախքան Խորհրդային Միությունից Հայաստանի անկախության հռչակումը, Տեր Պետրոսյանը սիրում էր վկայակոչել Հայաստանի Առաջին Հանրապետության ճակատագիրը, որը գոյություն ունեցավ երկու տարուց էլ պակաս ժամանակահատվածում՝ 1918-1920թթ.: Այդ ճակատագրից խուսափելու համար նա կարծում էր, որ Հայաստանը հավասարակշռված արտաքին քաղաքականության, և մասնավորապես, Թուրքիայի հետ լավ հարաբերությունների կարիք ունի: Հայաստանի անկախացումից վեց ամիս առաջ Տեր-Պետրոսյանը հանդիպեց Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալին՝ նրան հավաստիացնելով, որ.

«Հայաստանը փոխվում է, և այս նոր աշխարհում մենք պետք է լինենք հարևան պետություններ նոր մտածողությամբ: Մենք ցանկանում ենք բարեկամներ դառնալ: Մենք պատրաստ ենք փոխադարձ շահավետ ցանկացած համագործակցության: Հայաստանը ոչ մի տարածքային պահանջ չունի Թուրքիայի նկատմամբ»:¹³⁸

Այնուամենայնիվ, Տեր-Պետրոսյանը հաջողության չհասավ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործում: Երբ նա պաշտոնից դուրս մղվեց Ռոբերտ Քոչարյանի՝ անջատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախկին առաջնորդի կողմից, շատերը Երևանի նոր ղեկավարության մեջ նախկին նախագահի հաշտվողական քաղաքականությունը չեղյալ հայտարարեցին որպես ձախողված քաղաքականություն: Քոչարյանն օրենքից դուրս հայտարարված ՀՅԴ-ին կառավարության մաս դարձրեց և որոշեց ավելի սերտ աշխատել հայկական սփյուռքի հետ: Նա 1999թ. սեպտեմբերին Երևանում

¹³⁷ Levon Ter-Petrosian, speech entitled “[History, Ideology, Typology](#)” in Liberty Square, Yerevan, 8 December 2007.

¹³⁸ Nezavisimaya Gazeta (Russian newspaper), 14 May 1991.

կազմակերպեց հայկական սփյուռքի առաջին մեծ համագումարը: Քոչարյանը նաև ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձրեց: Համոզելով Թուրքիային, որ ցեղասպանության ճանաչումը տարածքային պահանջների բարձրացման պատճառ չի դառնա՝ նա քիչ ջանքեր գործադրեց Թուրքիային մոտենալու համար, միևնույն ժամանակ նշելով, որ «Մենք չէ, որ փակ ենք պահում հայ-թուրքական սահմանը»:¹³⁹

2008թ. ապրիլին Ռոբեշտ Քոչարյանին նախագահի պաշտոնում հաջորդեց վերջինիս նախկին վարչապետ Սերժ Սարգսյանը, որը ընտրություններում պարտության մատնեց Տեր-Պետրոսյանին: Քարոզարշավի ընթացքում որոշ լրատվամիջոցներ Տեր-Պետրոսյանին թրքասեր էին ներկայացնում՝ նրան անվանելով «Լևոն Էֆենդի»:¹⁴⁰ Այնուամենայնիվ, ընտրվելուց հետո Սարգսյանը որոշեց փորձել հարաբերվել Հայաստանի արևմտյան հարևանի հետ: 2008թ. հունիսի 23-ին Մոսկվայում դիմելով հայկական սփյուռքի ներկայացուցիչներին՝ նա նշեց.

«Հայաստանի դիրքորոշումը հստակ է, 21-րդ դարում հարևան երկրների միջև փակ սահմաններ չպետք է լինեն: Տարածաշրջանային համագործակցությունը կայունությանն աջակցող լավագույն միջոցներից կարող է լինել: Թուրքական կողմը առաջարկում է հանձնաժողով ստեղծել պատմական փաստերն ուսումնասիրելու համար: Մենք դեմ չենք նման հանձնաժողովի ստեղծմանը, բայց երբ պետությունների միջև սահմանը կբացվի»:¹⁴¹

Այդ ժամանակ էլ Հայաստանի նոր նախագահն իր թուրք գործընկեր Աբդուլա Գյուլին հրավիրեց Երևան: 2008թ. հուլիսի 9-ին The Wall Street Journal պարբերականում հրապարակած հոդվածում Սարգսյանն ավելի մանրամասն ներկայացրեց իր տեսակետը.

«Եկել է թարմ ջանքերի ժամանակը՝ այս փակուղին հաղթահարելու համար: Իրավիճակ, որը որևէ մեկին օգտակար չէ, իսկ վնասակար է շատերի համար: Որպես Հայաստանի նախագահ, ես օգտվում եմ այս հնարավորությունից՝ թարմ սկիզբ առաջարկելու համար: Թուրքիայի կառավարության և ժողովրդի հետ երկխոսության նոր փուլ՝ հարաբերությունները նորմալացնելու և ընդհանուր սահմանը բացելու նպատակով...: Երկու երկրների միջև նորմալ հարաբերությունների հաստատման իրական այլընտրանք գոյություն չունի»:¹⁴²

Երբ նախագահ Գյուլը որոշեց ընդունել Սարգսյանի առաջարկը և այցելել Երևան, Լևոն Տեր Պետրոսյանի գլխավորած ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը որոշեց

¹³⁹ SNARK, News Agency, 19 June 1999 (reprinted from Interview with Cenk Baslamis, *Milliyet* daily, 16 June).

¹⁴⁰ «Էֆենդին» Օսմանյան կայսրության պաշտոնյա կամ գրագետ մարդ էր:

¹⁴¹ Official website of the President of Armenia (ESI translation).

¹⁴² http://online.wsj.com/article/SB121555668872637291.html?mod=googlenews_wsj.

հետաձգել սեպտեմբերի 5-ին նախատեսված նախագահ Սարգսյանի դեմ բողոքի հանրահավաքը: «Մենք աջակցում ենք հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը» ասված էր Հայ ազգային կոնգրեսի հայտարարության մեջ: «Եվ մենք որևէ կերպ չենք ցանկանում սովորել հարաբերությունների հեռանկարին աջակցող որևէ իրադարձություն»:¹⁴³ Քոչարյանն էր, որ դժգոհություն արտահայտեց: 2008թ. հուլիսին պատասխանելով այն պնդումներին, թե նա դեռ կուլիսների հետևից ղեկավարում է երկիրը՝ նա նշեց. «Եթե դա ճշմարիտ լիներ, Լևոն Տեր Պետրոսյանն ամենայն հավանականությամբ արդեն բանտում կլիներ քրեական գործունեության համար: Եվ միանշանակ Թուրքիայի նախագահը Երևան չէր հրավիրվի ֆուտբոլային հանդիպում դիտելու համար»:¹⁴⁴ Այժմ սիրաշահման համար մեղադրանքներ ստանալու հերթը Սարգսյանինն էր: Ընդդիմադիր «Հայկական Ժամանակ» օրաթերթը նոր նախագահին մեղադրեց Թուրքիային չափից դուրս շատ «զիջումներ» անելու մեջ: Պարբերականի առաջին էջում պատկերված էր օսմանյան ֆես կրող Սարգսյանը, որն անվանված էր «Սերժիկ Էֆենդի»:¹⁴⁵ «Ինչպես կարելի է գնահատել այս վարքագիծը», հարցնում էր պարբերականը. «Քճնանք, սիրախաղ, եսասիրություն, թե պարզապես դավաճանություն»:¹⁴⁵

Որոշ հայեր դեռևս մտածում են, որ Թուրքիան չի կարող փոխվել: Թուրքիայի մոտիվների և իրական նպատակների վերաբերյալ երկյուղները լայն տարածում ունեն ինչպես շարքային քաղաքացիների շրջանում, այնպես էլ մամուլում: 2004թ. անցկացված հարցումների համաձայն, հարցվածների 68.7 տոկոսը թուրքերին մեկ բառով նկարագրելու առաջարկին ի պատասխան բացասական նկարագրություն են տվել, այդ թվում՝ «արյունախում» (6.4 տոկոս), «թշնամի» (10.1 տոկոս), «բարբարոս» (9.1 տոկոս), և «մարդասպան» (6.4 տոկոս): Հարցվածների միայն վեց տոկոսն է դրական բնութագրումներ տվել:¹⁴⁶ Երբ թուրք մտավորականներն սկսեցին 1915թ. համար ներողություն խնդրելու արշավը, մի շարք հայեր կասկածի ենթարկեցին նրանց մտադրությունները՝ երկյուղելով, որ նախաձեռնության նպատակը ցեղասպանության ճանաչման հայկական արշավը խոչընդոտելն էր:¹⁴⁷

Որոշ վերլուծաբաններ և քաղաքական գործիչներ շեշտել են, որ «Ստորագրությունների թիվը չափազանց փոքր է նախաձեռնության հանդեպ հասարակական աջակցության մասին խոսելու համար, իսկ դիմումի հեղինակները

¹⁴³ Հայ Ազգային Կոնգրեսի հայտարարությունը, 2008 Օգոստոսի 29

¹⁴⁴ Mediamax news agency, 9 July 2008.

¹⁴⁵ Nikol Pashinian, Haykakan Jamanak Editorial, October 29, 2008 (ESI translated).

¹⁴⁶ Turkish Economic and Social Studies Foundation (TESEV) – Sociological and Marketing Research Center (HASA Armenia), “Armenian-Turkish Citizens’ Mutual Perceptions and Dialogue Project,” Project directors Dr. Ferhat Kentel, Dr. Gevorg Poghosyan, Editing Volkan Aytar (TESEV), Yerevan-Istanbul, 2004.

¹⁴⁷ Alla Serobian, “Initiation or imitation?”, *Hayastani Hanrapetutyun* (Republic of Armenia), 20 December 2008.

չեն օգտագործում ցեղասպանությունն բառը»:¹⁴⁸ 1915թ. հիշողությունները նոր ուժ ստացան 2007թ. հունվարին Հրանտ Դինքի սպանության առնչությամբ: Հիշատակի և բողոքի միաժամանակ բազմաթիվ գործողություններ անկացվեցին Հայաստանում: ՀՅԴ երիտասարդական թևը հունվարի 22-ին բողոքի ակցիա անցկացրեց Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի առջև: Նրանք ունեին «Ցեղասպանությունը շարունակվում է», «Թուրքիա, քո ձեռքերն արյունոտ են», «Զսպեք թուրքերին», «Պահանջում ենք բացահայտել Դինքի սպանության վերաբերյալ ճշմարտությունը» վերտառությամբ պաստառներ: Հունվարի 24-ին Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի Գրողների միության կազմակերպած լրատվամիջոցների համաձայն շուրջ 10.000 մասնակից ունեցող երթը շարժվեց դեպի ցեղասպանության հուշահամալիր՝ դատապարտելու համար սպանությունը: «Ցեղասպանությունը շարունակվում է»,- նշել է մասնակիցներից մեկը:¹⁴⁹ Խորհրդարանական քննարկումների ժամանակ Հայաստանի նախկին վարչապետ (1992-1993թթ.) Խոսրով Հարությունյանը առաջարկել է, որ «Հայաստանը ամեն ինչ պետք է անի միջազգային հանրությանը ցույց տալու համար, որ Թուրքիան ընդհանրապես չի փոխվել»:¹⁵⁰

Այնուամենայնիվ, միննույն ժամանակ շատ մարդիկ Երևանում, տպավորված Ստամբուլում Դինքի զանգվածային հուղարկավորության պատկերներով և բազմաթիվ թուրքերի անկեղծ վշտով, հանգում էին հակառակ եզրակացությունների: «Հայկական Ժամանակի» թղթակից Աննա Հակոբյանը գրում է. «Հեռուստատեսությամբ ցուցադրվող պատկերներն իրոք որ տպավորիչ էին: Հրանտ Դինքի դագաղն ուղեկցող հարյուր հազարավոր մարդկանց ալիքը տպավորիչ էր: Ժամանակ առ ժամանակ լսվող ծափահարությունները տվավորիչ էին: «Մենք բոլորս հայեր ենք», «Մենք բոլորս Հրանտ Դինքն ենք», «Դադարեցրեք 301 հողվածը». «Ուս ուսի ֆաշիզմի դեմ» և նմանատիպ կոչերը տպավորիչ էին: Նույնիսկ մինչև Հրանտ Դինքի հուղարկավորության արարողությունը թուրք իշխանությունները Հայաստանի իշխանություններին ուղղված հաշտության աննախադեպ քայլ կատարեցին»:¹⁵¹ Անկարային մոտենալու խնդրում նոր համաձայնությունը, որը աջակցություն էր ստանում վերջին ժամանակներս նկատվող Թուրքիայի լիբերալացմամբ, հարաբերությունների պատմական բարելավման հնարավորության նոր պատուհան բացեց: Այն նաև շոշափելի ազդեցություն ունեցավ Հայաստանում թուրքերի և Թուրքիայի ընկալումների վրա: IRI-ի կողմից աջակցություն ստացած հարցումների շարքը վերջերս բացահայտեց, որ 2007թ. մարտին՝ Դինքի սպանությունից հետո, հայերի 89 տոկոսը Թուրքիան համարել էր երկրի առջև ծառայած ամենակարևոր սպառնալիքներից մեկը: 2008թ. հունվարին այդ թիվը նվազեց՝ հասնելով 56

¹⁴⁸ “[Turkish apology campaign proved that public fear wanes](#)”, PanArmenian, 22 December 2008.

¹⁴⁹ Susanna Margarian in *Azg Daily*, 25 January 2007, ESI translation.

¹⁵⁰ National Assembly of Armenia, [Hearings on the Armenian-Turkish relations](#), 19 December 2007.

¹⁵¹ Anna Hakobian, “Everything is heading to reconciliation”, *Haykakan Jamanak*, 24 January 2007.

տոկոսի: ¹⁵² 2006թ. դեկտեմբերին տված հարցազրույցում, այդ ժամանակ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը պնդում էր, որ 2005թ. Թուրքիայի վարչապետ Էրդողանի առաջարկած հայ և թուրք պատմաբանների հանձնաժողովը որևէ արդյունք չի տա: Նա նշել է, որ թուրք պատմաբաններն ի վիճակի չեն լինի ցեղասպանություն բառն արտասանել: «Ինչպես կարող են նրանք խոսել հայ պատմաբանների հետ, երբ Թուրքիայում արգելող օրենքներ կան: Մա նման է թոչունին վանդակից ազատելուն՝ նախօրոք նրա թևերը ջարդելով»:¹⁵³

Այսօր դա այլևս ճշմարիտ չէ: Նոր մթնոլորտում ջարդված թևերը բուժվում են՝ Հայաստանի և Թուրքիայի համար նոր հնարավորություններ ստեղծելով: Ժիրայր Լիպարիտյանը հայկական հանրապետության ոգու համար մղվող ճակատամարտը սահմանել էր որպես պատասխան հետևյալ հարցին. «Հանրապետությունը պետք է սահմանել ցեղասպանությամբ և հակաթուրքականությամբ, թե՛ այն պետք է դառնա նորմալ պետություն՝ հարևանների հետ խաղաղ հարաբերություններով և իր քաղաքացիների անվտանգությանը և բարեկեցությանը ձգտելով»:¹⁵⁴ Առաջիկա ամսիները ճիշտ ժամանակ են այս հարցին պատասխանելու համար: Ինչպես նշել է Տեր Պետրոսյանը. «Շատ ազգեր և պետություններ տարբեր հանգամանքներում և տարբեր պատճառներով հայտնվել են ազգային կործանման եզրին: Հայերը և հրեաները ենթարկվել են ցեղասպանության: Գերմանիան և Ճապոնիան, կործանիչ պարտություն կրելով, ամբողջությամբ ավերվել են: Օսմանյան Թուրքիան, Բրիտանիան և Ռուսաստանը կորցրել են իրենց ամենագոր կայսրությունները: Յուրաքանչյուր ազգ հավատում է իր ողբերգության եզակիությանը... Այնուամենայնիվ, գրեթե բոլոր այս պետությունները և ժողովուրդները, ազգային ողբերգություն վերապրելով, այդ ողբերգությունը վերածել են բուժման և ուժեղացման, այլ ոչ թե անհուսության և թերարժեքության գործիքի: Նրանք ներքին ուժ են գտել ոչ միայն վերքերը բուժելու և պատմական բարդություններից ազատվելու, այլև վերածնունդ ապրելու և աշխարհի առավել փայլուն և աշխույժ պետությունների համայնքին միանալու համար: Ի՞նչն է խանգարում մեզ հետևել այդ ազգերի օրինակին»:¹⁵⁵

VI. Եզրակացության փոխարեն. Արարատի լույսը

Նրա գյուղը՝ Լուսառատը՝ նետված քարի հեռավորության վրա է գտնվում թուրքական սահմանից, բայց սա առաջին անգամ էր, որ Հայկը մի թուրքի իր տուն էր

¹⁵² All available at the International Republican Institute relevant section, <http://www.iri.org/Polls.asp>.

¹⁵³ Noyan Tapan, 13 December 2006.

¹⁵⁴ Gerard L ibaridian, *Modern Armenia – People, Nation, State*, 2004, p. 280.

¹⁵⁵ <http://www.levonforpresident.am/?catID=20&contID=85>.

հրավիրում:¹⁵⁶ Արարատի լույսը Հայաստանի ամենանշանավոր եկեղեցիներից մեկի՝ սահմանին մոտ գտնվող բլրի վրա բարձրացող Խոր Վիրապի մոտ է: Այստեղ էր 13 տարի բանտարկված Գրիգոր Լուսավորիչը նախքան հայոց թագավոր Տրդատ Երրորդին հիվանդությունից բուժելը և նրան քրիստոնյա դարձնելը: Արդյունքում Հայաստանը 301թ. դարձավ պաշտոնապես քրիստոնեությունն ընդունած առաջին երկիրը: Բայց Խոր Վիրապը, պատմական դասեր տրամադրելուց առավել, Արաքս գետի և Արարատ լեռի երկայնքով գտնվող կանաչ գոտու տեսարան է տրամադրում սահմանի արևմտյան, թուրքական հատվածում: Անամպ օրերին նույնիսկ կարելի է նշմարել գործարանի, մզկիթի, շարժվող ավտոմեքենայի ուրվագծերը: Չնայած իր անվանը և տեղադրությանը, Լուսառատը բավականին մռայլ վայր է: Խորհրդային ժամանակներում, երբ Լուսառատն անվտանգության հատուկ գոտում էր Խորհրդային Միության և NATO-ի սահմանի միջև, միայն տեղաբնակներն իրավունք ունեին գյուղ մտնել: Այսօր գյուղը գնալով փոքրանում է, նրա տներն ավելի շատ խրճիթների են նման, դպրոցն ավերակների է վերածվել՝ ամենուր կոտրված պատուհաններ և թիթեղյա տանիքի կտորներ են: Փշալարը, սահմանային գոտին ընդամենը հարյուր մետր այն կողմ է: Հայկը և նրա կին Լուսինեն թուրք հյուրին՝ (Եվրոպական կայունության նախաձեռնության հետազոտող), առաջարկում են իրենց ձեռքերով պատրաստված պանիր, հայկական սուրճ և ձու: Թուրքական ալիք ցուցադրող արբանյակային հեռուստատեսությամբ թուրք փորձագետները քննարկում են Էրզնեսեկոնի խնդիրը: Ընտանիքը քննարկում է Թուրքիայի հարցը: «Դինքը չի սպանվել պատահական տղայի կողմից: Դա պետությունն էր: Մենք ևս պետության խորը փորձ ունենք: Դուք գիտեք չէ՞ մեր խորհրդարանում 1999թ. տեղի ունեցած հարձակման մասին: Մենք այստեղ վախենում ենք պետությունից»: Հայկը գտնում է, որ «հիանալի է, որ այդքան շատ մարդ ինքնաբուխ դուրս եկավ փողոց Դինքի սպանությունից հետո»: Լուսինեն չի հավատում, որ համերաշխության ցուցադրությունն անկեղծ էր: Նրանք մի պահ վիճում են, հետո Հայկը շարունակում է.

«Իմ հայրը Դիարբեքիի շրջակայքից է, նա քրդերեն էր խոսում: Նրան արտաքսել են Միրիա, որտեղից 1966թ. վերադարձել է Հայաստան: Իմ կինը ծնվել է այս գյուղում, բայց նրա ընտանիքի արմատները Մուշից են, նրանք սահմանը հատել են 1923թ.: Մենք ի վիճակի եղել ենք խոսել սահմանից այն կողմ: Ես նորմալ եմ վերաբերում սահմանից այն կողմ գտնվող թուրքերին: Նրանք տարբերվում են այն մարդկանցից, որոնց ձեռքից մենք տառապել ենք: Իհարկե, մենք չենք մոռանա պատմությունը, սակայն մենք պետք է բարիդրացիական հարաբերություն և բաց սահման ունենանք: Չկա որևէ պատճառ, որ մենք այդպես չվարվենք:

¹⁵⁶ Գյուղացիների խնդրանքով նրանց իրական անունները չեն օգտագործվում

Գյուլի այցը Հայաստան առաջին իսկապես դրական զարգացումն էր: Մեր նախագահի հրավերը հարգվեց և մենք շատ երջանիկ ենք: Մեծամասնությունը չէր հավատում, որ նա կգա: Ամեն ինչն իր պատճառն ունի: Գուցե ֆուտբոլը մեզ առաջնորդի այլ հարցերի: Մենք ավելի շատ ենք հոգում սահմանի մասին, քան Երևանում գտնվող կարևոր մարդիկ: Մեր տանը թուրք հյուր ընդունելով՝ մենք ավելի շատ բան ենք տեսնում, քան որևէ մեկը: Շատերն են գալիս Խոր Վիրապ եկեղեցի, բայց ոչ ոք մեր գյուղ չի գալիս: Ինչ վերաբերում է սահմանի բացմանը, ես կհավատամ, երբ տեսնեմ բաց սահմանը: Իհարկե, ես ցանկանում եմ գնալ և տեսնել, թե որտեղի՞ց են եկել մեր նախնիները, ո՞ր հայր չի ցանկանում: Իմ երազներում ես ցանկանում եմ մեկ անգամ տեսնել այդ վայրը: Պատմիր ինձ Ախթամարի մասին, եթե տեսել ես:¹⁵⁷ Ես ցանկանում եմ Վանա լճի ձուկ ուտել: Խորհրդային ժամանակներում ես գործարանում եմ աշխատել: Դա հրաշալի էր: Մենք կայուն աշխատանք, անվճար կրթություն և առողջապահություն ունեինք: Այժմ գործարաններ չկան: Վեց ամիս է, ես գրեթե ոչինչով զբաղված չեմ: Ես հող ունեմ, որտեղ սեզոնային աշխատանքներ եմ կատարում: Բայց հողի հետ ես շատ բան անել չեմ կարող, որովհետև միջոցներ չունեմ մեքենաների մեջ ներդնելու համար: Եթե պարտք վերցնեմ, հնարավոր է, չկարողանամ վճարել այն, և այդ դեպքում իմ հողը կանցնի բանկին: Ուստի ես այդ ռիսկին չեմ գնում: Բնական գազը, էլեկտրականությունը և ջուրը գնալով թանկանում են: Սնունդն այստեղ շատ ավելի էժան է, քան Երևանում, սակայն մենք չենք կարող դրանից օգտվել: Կանխիկ փող ձեռք բերելը շատ դժվար է: Առանց արտասահմանից փող ուղարկող մեր բարեկամների, մենք չենք կարող ապրել: Իմ եղբայրը բնակվում է Արևմտյան Եվրոպայում: Իմ ավագ որդին սովորում է, պատրաստվում է ատամնաբույժ դառնալ: Փոքր որդիս դպրոցական է: Կառավարությունը չի կատարում իր պարտականությունները: Նրանք մեզնից վերցնում են, բայց չեն տալիս: Մենք պետք է վճարենք հիվանդանոցում բուժվելու համար: Որոշ մարդկանց հողեր բռնագրավվել են և տրվել վարչակազմին մոտ կանգնածներին: Այս համակարգում կաշառակերությունը պարզևատրվում է: Ազնիվները կորցնում են իրենց աշխատանքը: Միայն մեկ գործարանը բավարար կլիներ մեր կյանքը բարելավելու համար: Մենք շատ բան չենք ուզում: Կյանքը շատ ավելի լավ կլիներ, եթե չլիներ Ղարաբաղի խնդիրը: Պատերազմից տարիներ անց մենք շարունակում ենք տանջվել: Այս գյուղում շուրջ 500 ադրբեջանցիներ էին բնակվում: Մենք միասին լավ էինք ապրում: Այժմ այստեղ 1.100 հայ է բնակվում: Երբ հակամարտությունը հասավ մեր գյուղ, ադրբեջանցիները հարկադրված էին փախչել: Նրանցից մեկը շատ հիվանդ էր և չէր կարող հեռանալ: Նա եկավ իմ դռան առջև: Ես նրան ներս բերեցի: Իմ տունը շրջապատվեց: Ինձ ասացին, որ ես չպետք է նրան օգնեմ: Ես նրան հիվանդանոց տարա, սակայն նրան հետ ուղարկեցին: Նա մահացավ իմ տանը: Ես տեսել էի մահմեդական հուղարկավորության արարողությունները: Ես

157 Վանում հայտնի միջնադարյան հայկական եկեղեցի

լվացի նրան, կանչեցի իմ քահանա ընկերոջը: Մենք թաղեցինք նրան՝
հնարավորինս պահպանելով մահմեդական սովորույթները»:

Հայկի աչքում արցունքներ էին հայտնվել: Սա քիչ հավանական վայր կարող է թվալ
հաշտության մասին երազելու համար: Եվ այնուամենայնիվ, Լուսառատի
աղքատացած ընտանիքի հյուրասենյակում հնարավոր է դառնում այլ ապագա
պատկերացնել խնդրահարույց Կովկասի համար: